


ԹԵՐԵՉԸ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ

ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

(Ի նիւթն անուանուող անուանուող անուանուող)

ՄԱՍՆ Ը.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ԿԱԶԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

ՅԱԲԵԼՈՒԱԾՆԵՐ

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա.

Յ. Մ. Յ. Թ.

մարդասէր Աստծոյ ողորմած սիրոյն
անձս որպէս ողջակէզ զոհ նուիրելու աղօթքը

Աստուած իմ, Երրորդութիւն երանելի, ուզում եմ սիրել Քեզ եւ այնպէս անել, որ բոլորը սիրեն Քեզ. ուզում եմ աշխատել Սուրբ Եկեղեցու փառքի տարածման համար, փրկելով այն հոգիներին՝ որոնք դեռ աշխարհում են, եւ ազատագրելով նրանց՝ որոնք Քաւարանում են: Ուզում եմ լիովին գործադրել Քո կամքը եւ հասնել փառքի այն աստիճանին, որ պատրաստել ես ինձ Արքայութեանդ մէջ: Մի խօսքով, ուզում եմ սուրբ լինել: Բայց քանի որ զգում եմ լիակատար անուժութիւնս, աղաչում եմ Քեզ, Աստուած իմ, Դու Ինքդ եղիր իմ սրբութիւնը:

Քանի որ այնքան սիրեցիր ինձ, որ տուեցիր միակ Որդիդ, որպէսզի լինի Փրկիչս ու Պաշտպանս, Նրա անսահման արժանիքների գանձերը պատկանում են ինձ, եւ ես դրանք Քեզ եմ ընծայում բերկրանքով, խնդրելով նայել ինձ միմիայն ընդմէջ Յիսուսի Դէմքի ու Սրտի, որ բոցավառում է սիրով:

Քեզ եմ ընծայում նաեւ բոլոր արժանիքները Սրբերի (որոնք Երկնքում են եւ որոնք դեռ երկրի վրայ), նրանց եւ սուրբ Հրեշտակների սիրոյ ներգործութիւնները: Եւ վերջապէս, Քեզ եմ ընծայում, ո՛վ Երրորդութիւն երանելի, սէրն ու արժանիքները Ամենասուրբ Կոյսի, իմ սիրասուն Մօր: Նրան եմ վստահում նուիրումս եւ խնդրում եմ ներկայացնել այն Քեզ: Իր աստուածային Որդին, այնքա՛ն սիրելի Պաշտպանս, Իր երկրային կեանքի օրերում խոստացաւ, թէ՛ «Ինչ խնդրէք Հօրից իմ անունով, կը տայ ձեզ»¹:

Վստահ եմ, հետեւաբար, որ կ'ընդունես խնդրանքս. գիտեմ, Աստուած իմ, որ որքան աւելի ես կամենում տալ, այնքան աւելի մեծ փափաք ես առաջացնում սրտում²: Սրտիս խորքում զգում եմ փափաքներ վիթխարի, եւ աղաչում եմ Քեզ մեծ վստահութեամբ. ե՛կ եւ տիրիր հոգուս: Ա՛հ, հնարաւորութիւնը չունեմ հաղորդուելու այնքան յաճախակի՝ որքան կամենում եմ. բայց, Տէր, մի՞թէ Դու չես Ամենակարողը: Մնա՛ ինձնում ինչպէս Տապանակի մէջ, մի՛ հեռացիր Քո փոքրիկ նշխարից:

Կ'ուզէի մխիթարել Քեզ մեղաւորների ապերախտութեան փոխարէն. պաղատում եմ, զրկիր ինձ Քեզ տհաճութիւն պատճառելու ազատ հնարաւորութիւնից: Իսկ եթէ երբեմն տկարութեանս պատճառով ընկնեմ, թող աստուածային հայեացքդ իսկոյն մաքրագործի հոգիս, այրելով բոլոր թերութիւններս, ինչպէս կրակը, որն իրեն է վերափոխում ամէն ինչ:

Երախտագիտութիւնս եմ յայտնում Քեզ, Աստուած իմ, այն բոլոր շնորհներիդ համար, որ պարգեւել ես ինձ, եւ յատկապէս այն մէկի համար, որով անցկացրիր ինձ տառապանքի հնոցով: Երջանկագոյն կը լինեմ տեսնելով գալուստդ, Ահեղ Դատաստանի օրը, արքայական խաչանիչ գաւազանովդ: Եւ քանի որ ինձ իբրեւ ժառանգութիւն տուիր այս այնքա՛ն թանկագին խաչը, յուսով եմ նմանուել Քեզ Երկնքում եւ այլեւս փառաւորուած մարմնիս վրայ տեսնել խաչակիր տառապանքիդ սպիերի մեծաշուք փայլը:

¹ Յվհ 16, 23-24

² Սբ. Յովհաննէս Խաչի խօսքերն են:

Այս երկրաբնակ աքսորից յետոյ յուսով եմ գալ հայրենիքում Քեզ վայելելու, բայց չեմ կամենում արժանիքներ դիզել Երկինքը ձեռքբերելու նպատակով, այլ կամենում եմ աշխատել միմիայն սիրոյդ համար, որպէս միակ նպատակ ունենալով Քեզ հաճոյք պատճառելը, Սուրբ Սիրտդ մխիթարելն ու հոգիներ փրկելը, որպէսզի կարողանան սիրել Քեզ յաւիտեան:

Այս կեանքի մայրամուտին առջեւ կը կանգնեմ դատարկ ձեռքերով, որովհետեւ չեմ խնդրում, Տէր, որ հաշուի առնես գործերս: Մեր բոլոր դատաստանները, որ համարում ենք արդար, բժաւոր ու թերի են աչքերիդ առաջ¹: Կամենում եմ, հետեւաբար, զգեստաւորուել Քո իսկ արդարութեամբ եւ սիրոյդ ձեռքերից որպէս յաւերժական ժառանգութիւն ստանալ ... Քեզ միայն ... : Ա՛յլ գահ չեմ ուզում, եւ ո՛չ էլ թագ ու պարծանք ... այլ միայն Քեզ, ով Սիրելի իմ:

Քո համար ժամանակը ոչինչ է, միայն մի օրը հազար տարուայ պէս է². ուրեմն, կարող ես նաեւ մի վայրկեանում պատրաստել ինձ Քո մօտ գալու:

Ապրելու համար սիրոյ կատարեալ գործադրումով, նուիրում եմ ինձ որպէս անմնացորդ զոհ ողորմած Սիրոյդ, պաղատելով այրել ինձ առանց դադարի, հոգուս անօթի մէջ զեղելով կոհակներն անսահման գորովիդ, որոնք պարփակուած են Քեզնում, որպէսզի այսպիսով կարողանամ դառնալ սիրոյդ մարտիրոսներից մէկը, ո՛վ Աստուած իմ:

Թող այս մարտիրոսութիւնը, դէպի Քեզ սաւառնելուն պատրաստելուց յետոյ, մահ պարգեւի ինձ ու հոգիս, առանց որեւէ կանգառի, մղուի դէպի ողորմած սիրոյդ յաւիտենական գրկախառնումը:

Կամքս սա է, Սիրելի իմ. սրտիս իւրաքանչիւր բաբախման հետ կրկին ու կրկին, անթիւ անգամներ վերստին նորոգել այս նուիրումս, մինչեւ, ստուերների փարատումից յետոյ³, կը կարողանամ սէրս խոստովանել Քեզ դէմ առ դէմ, յաւիտեան:

Մարիա Ֆրանչեսկա Թերեզա
Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի
անարժանաբար՝ կարմեղական միանձնուհի

Տօն Ամենասուրբ Երրորդութեան

9 Յունիսի 1895

¹ Ես 64, 6

² Սղմ 89, 4

³ Երգ 4, 6

ՅԱԻՆԼՈՒԾ Բ.

ԱՊՐԵԼ ՍԻՐԵԼՈՎ

1. Յիսուս, սիրոյ պատուիրանի տրման երեկոյեան, առանց առակների ու փոխաբերական իմաստների, ասաց. «Եթէ մէկը կամենում է սիրել ինձ, թող իմ խօսքը պահի հաւատարմութեամբ, եւ ես ու իմ Հայրը կը գանք նրա մօտ ու նրա մօտ կ'օթեւանենք: Նրա սրտում կը հաստատենք մեր բնակութիւնը, նրան կը դարձնենք մեր դղեակը, մեր կենդանի բնակավայրը, որովհետեւ ուզում ենք, որ նա հաստատուն մնայ մեր սիրոյ մէջ»¹:

2. Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է պահպանել Քեզ, ով խօսք անստեղծ, խօսք իմ Աստծոյ: Ես սիրում եմ Քեզ, եւ Դու դա գիտես, ով Աստուած իմ, Յիսուս: Սիրոյ Սուրբ Հոգին հրդեհում է ինձ Իր բոցերով: Քեզ սիրելով՝ դէպի ինձ եմ ձգում Հօրը, որպէսզի հսկի այս տկար սրտիս վրայ, առանց փախուստի որեւէ հնարաւորութիւն տալու: Ո՛վ Երրորդութիւն, Դու իմ սիրոյ բանտարկեալն ես:

3. Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է ապրել Քո կեանքը, Արքայ փառահեղ, բերկրանք ընտրեալների: Դու իմ համար ապրում ես մի փոքրիկ նշխարում ծածկուած: Ես նոյնպէս կամենում եմ թաքնուել Քո համար, Յիսուս: Հարկաւոր է միայնութիւն սիրեցեալներին, սիրտ սրտի, որ տեւի օր ու գիշեր: Քո մի ակնարկն անգամ ինձ երանութեամբ է լցնում. ես ապրում եմ ըստ սիրոյ:

4. Ապրել ըստ սիրոյ՝ չի նշանակում հաստատել այստեղ երկրի վրայ, Թաքոր լեռան գագաթին, սեփական վրանը. այլ՝ բարձրանալ Յիսուսի հետ Գողգոթա, եւ փնտուել Խաչի գանձը: Կ'ապրեմ բերկրալի Երկնքում, երբ բոլոր փորձութիւնները անցած կը լինեն մէկընդմիջտ: Բայց այստեղ կամենում եմ ապրել սէրը տառապանքի բովում:

5. Ապրել ըստ սիրոյ այստեղ ներքեւում, նշանակում է տրուել առանց չափի զգացման, առանց հատուցում պահանջելու: Ես նուիրում եմ ինձ անմնացորդ կերպով, որովհետեւ վստահ եմ, որ երբ սիրում են՝ հաշուարկներ չեն կատարում: Ես ամէն բան տուել եմ աստուածային Սրտին, որ լի է գորովով, եւ ընթանում եմ թեթեւ: Չունեմ այլեւս ոչինչ, եւ իմ միակ հարստութիւնն է ապրել ըստ սիրոյ:

6. Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է մոռացութեան մատնել որեւէ միտք, որեւէ յուշ անցեալ սխալների: Չեմ տեսնում եւ ոչ իսկ հետքը մեղքերիցս մէկի, նրանցից իւրաքանչիւրն անէացել է աստուածային կրակի բովում: Ո՛վ սրբազան բոց, քաղցրագոյն հոտ, կրակներիդ ներսում եմ հաստատում բնակութիւնս: Եւ այստեղ, ըստ իմ հաճոյքի, երգում եմ, Յիսուս, եւ ապրում եմ ըստ սիրոյ:

7. Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է պահել այս մահկանացու անօթներում մի անհատնում գանձ: Ո՛վ Սիրելի իմ, ես շատ եմ տկար եւ ոչնչով նման չեմ երկնային հրեշտակներին: Բայց եթէ նոյնիսկ ընկնում եմ ամէն քայլափոխի, Դու հասնում ես ինձ, վեր բարձրացնում, պահում Քո գրկում, եւ տալիս ես ինձ Քո շնորհը: Ես ապրում եմ ըստ սիրոյ:

8. Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է նաւարկել անդադար, սրտերից ներս սերմանելով հոգեգոլարթ խաղաղութիւն: Առաջնորդ իմ սիրելի, տուր ինձ Քո սէրը, որպէսզի կարողանամ տեսնել Քեզ բոլոր մերձաւորներիս հոգիներում: Մարգասիրութիւն. ահա իմ միակ աստղը, նրա լոյսի ներքոյ նաւարկում եմ ուղիդ, անսխալ: Եւ իմ առագաստի վրայ գրուած է նշանաբանս. «Ապրել ըստ սիրոյ»:

¹ Հմմտ. Յվհ 14, 23; 15, 9

9. Ապրել ըստ սիրոյ, երբ Յիսուս նիրհում է, նշանակում է հանգստանալ փոթորկայոյց ալիքների վրայ: Ա՛հ ո՛չ, Յիսուս, Քեզ չեմ արթնացնի, ես խաղաղութեամբ սպասում եմ երկնային նաւահանգիստ հասնելուն: Շատ շուտով հաւատքը կը պատուի իր քօղը, յոյսս կը լինի միայն մի օրուայ համար. սէրը փքում ու առաջ է մղում առագաստս: Եւ ես ապրում եմ ըստ սիրոյ:

10. Ապրել ըստ սիրոյ, ով աստուածային Ուսուցիչ իմ, նշանակում է աղաչել Քեզ սփռել ճառագայթներդ քահանաների ընտրեալ ու սուրբ հոգիների վրայ, որպէսզի նրանք աւելին լինեն՝ քան երկնային Սերովբէները: Անառիկ պահիր Քո անմահ Եկեղեցին. պաղատում եմ Քեզ սրա համար ամէն վայրկեան: Ես, նրա դուստրը, զոհաբերում եմ ինձ իր համար, եւ ապրում եմ ըստ սիրոյ:

11. Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է չորացնել արնածոր Դէմքդ եւ ներում աղերսել մեղաւորների համար. թող վերստին ստանան Քո շնորհը, ով Աստուած սիրոյ, եւ յաւէտ օրհնեն Քո անունը: Ամէն սրբապղծութիւն, աստուածայինի դէմ ուղղուած ամէն անարգանք խոցում է սիրտս, եւ որպէս դարման միշտ կրկնում եմ. Սիրում եմ Քեզ, պաշտում եմ Քեզ, ո՛վ Անուն սրբազան: Եւ ապրում եմ ըստ սիրոյ:

12. Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է հետեւել Մարիամ Մազդաղենացու օրինակին, որն արցունքներով ու անուշաբոյր իւղերով էր պատում աստուածային ոտքերդ, համբուրում դրանք յափշտակուած, ապա սրբում իր երկար վարսերով: Իսկ յետոյ, սուրբ յանդգնութեամբ ոտքի ելնելով, քաղցրիկ երեսդ նոյնպէս օծում էր բուրումնաւէտ իւղով: Իմ հոտաւէտ օծանելիքը, որ յղում եմ Քո Դէմքին, սէրս է:

13. Ապրել ըստ սիրոյ, ի՞նչ արտասովոր խենթութիւն է սա: Ասում է ինձ աշխարհը. «Դադարիր այն գովերգելուց եւ ուշադրութիւն դարձրու, որ չվատնես արժէքներդ, կեանքդ. օգտագործիր դրանք խելացիօրէն»: Բայց սիրել Քեզ, Յիսուս, ի՛նչ կորուստ չահաւէտ: Իմ բոլոր արժէքները Քոնն են, ընդմիշտ: Եւ ուզում եմ երգել, մի կողմ թողնելով աշխարհը. Ես մեռնում եմ սիրուց:

14. Մեռնել ըստ սիրոյ. ահա այն քաղցր մարտիրոսութիւնը, որ կամենում եմ կրել: Ո՛վ Քերովբէներ բոլոր, հնչեցրէք նուագարանները, որովհետեւ աքսորս, զգում եմ, վերջանում է: Գեղարդ հրավառ, սպառի ինձ անդադար, խոցիր սիրտս այս տխուր բնակավայրում: Աստուած իմ, Յիսուս, ի կատար ածիր երազանքս. մեռնել ըստ սիրոյ:

15. Մեռնել ըստ սիրոյ. ահա իմ յոյսն ու ակնկալութիւնը: Երբ կործանուած կը տեսնեմ իմ բոլոր շղթաները, Աստուած Ինքը կը լինի իմ միակ վարձատրումը. ա՛յլ բարիքներ չեմ ուզում: Ամբողջովին գրաւուած եմ իր սիրուց, եւ թող գայ, ուրեմն, սեղմելու ինձ իր կրծքին, ընդմիշտ: Ահա իմ երկինքը, ճակատագիրն իմ. Ապրել ըստ սիրոյ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Գ.

1. Ծնորհաւորում է եւ ուրախակցում նրան, քահանայական կոչման ճգնաժամը քաջութեամբ յաղթահարած լինելու համար: Յուսով է, որ Յիսուս կ'իրագործի նրա առաքելատենչ փափաքները:

Յ. Մ. Յ. Թ.

Լիզէոյի Կարմեղոս, 21 Հոկտ. 1896
Յիսուս †

Մեծարգոյ Եղբայր,

Մեր վերապատուելի Մայրը, լինելով հիւանդ, յանձնարարեց ինձ պատասխանել Ձեր նամակին: Ցաւում եմ, որ զրկուեմ էք այն սուրբ խօսքերից, որոնք կ'առաքուէին Ձեզ այս բարեգութ Մօր կողմից, բայց նաեւ երջանիկ եմ իր թարգմանը լինելու համար, ինչպէս նաեւ հնարաւորութիւնն ունենալու համար յայտնելու այն բերկրանքը, որ նա ապրում է, ըմբռնելով թէ Յիսուս ինչպիսի իմաստութեամբ է գործում Ձեր հոգում: Հաւաստիացնում եմ Ձեզ, որ նա կը շարունակի աղօթել, որպէսզի Աստուած մինչեւ վերջին մասնիկն ի կատար ածի Ձեզնում իր աստուածային գործը: Կարծում եմ աւելորդ է նշելը, Մեծարգոյ Եղբայր, որ ես նոյնպէս հոգիով-սրտով մասնակցեցի մեր Մօր ուրախութեանը: Ձեր Յուլիս ամսուայ նամակը մեծապէս վշտացրել էր ինձ, որովհետեւ աղօթքների մէջ ջերմեռանդութեանս պակասին էի վերագրում այն երկու պայքարները, որ գտել էիք Ձեր առջեւ: Չէի դադարում Առաքեալների քաղցրիկ Թագուհու մայրական պաշտպանութիւնը հայցել Ձեր վրայ: Եւ ինձ մեծ մխիթարութիւն պարգեւեց ստացումը – որպէս անուանս տօնի օրուայ նուէր – այն երաշխաւորման, որով աւետում էիք խեղճ աղօթքներիս ընդունուած լինելու փաստը:

Այժմ, երբ փոթորիկն այլեւս ետեւում է, երախտագիտութիւնս եմ յայտնում մարդասէրն Աստծուն, Ձեզ դրա միջով անցկացնելու համար, որովհետեւ ահա թէ ինչ խօսքեր ենք կարդում Սուրբ Գրքում. «Երանի այն մարդուն, որ ենթարկուեմ է փորձութիւնների եւ համբերում»¹, ինչպէս նաեւ. «Ի՞նչ գիտէ նա՝ ով փորձութիւններ չի կրել»²: Իրականում, երբ Յիսուս որեւէ մէկին կանչում է ա՛յլ հոգիների հսկայ բազմութիւն առաջնորդելու, փրկելու, անհրաժեշտ է, որ նրանց տայ այս կեանքին բնորոշ հոգեւոր փորձութիւնների եւ նիւթական փորձանքների փորձառութիւնը: Եւ քանի որ Ձեզ հաղորդեց պայքարից յաղթական դուրս գալու շնորհը, յուսով եմ, Մեծարգոյ Եղբայր, որ մեր այնքա՛ն քաղցր Յիսուսն Ինքը կ'իրագործի Ձեր վեհ փափաքները: Ես Նրան խնդրում եմ, որ Ձեզ դարձնի ոչ միայն լաւ առաքեալ, այլ՝ սուրբ, որն ամբողջովին գրաւուած է Աստծոյ եւ հոգիների սիրուց: Խնդրում եմ Ձեզ իմ համար նոյնպէս հայցել այդ սէրը, որպէսզի կարողանամ օգնել Ձեզ Ձեր առաքելական գործում: Լաւ գիտէք, որ եթէ կարմեղականը չլինի առաքեալ, կը հեռանայ իր կոչման նպատակակէտից եւ կը դադարի սերովբէանման Սրբուհի Թերեզայի ոգու ժառանգը լինելուց, որը կամենում էր հազարաւոր անգամներ զոհաբերել իր կեանքը, գէթ մի անձ աւելի փրկելու համար:

Չեմ կասկածում, Մեծարգոյ Եղբայր, որ կը շտապէք Ձեր աղօթքները նոյնպէս միացնել իմ աղերսներին, որպէսզի մեր Տէրը առողջութիւն շնորհի մեր վերապատուելի Մօրը:

¹ Յկբ 1, 12

² Սիբ 34, 10

Յիսուսի ու Մարիամի սրբազնասուրբ Սրտերի մէջ, յաւիտեան երջանիկ կը լինեմ կոչուելու՝

Ձեր անարժան քոյրիկ
Թերեզա Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի
անարժանաբար՝ կարմեղական միանձնուհի

2. Իր հոգեւոր եղբօրը հրաւիրում է միասին անվախօրէն խմել Յիսուսի դառն բաժակը, որպէս նպատակ ունենալով հոգիների փրկութիւնը: Իրենց առջեւ տեսնում է յաւիտենական երանութիւնը:

Յ. Մ. Յ. Թ.

Լիզէոյի Կարմեղոս, 26 Դեկտ. 1896
Յիսուս †

Մեծարգոյ Եղբայր,

Մեծապէս կամենում էի շուտով պատասխանել Ձեր նամակին, բայց մեր կարմեղական օրէնքները չթոյլատրեցին ինձ ո՛չ գրել, եւ ո՛չ էլ նամակներ ստանալ Յիսնակաց շրջանում, Սուրբ Ծննդից առաջ: Մեր վերապատուելի Մայրը, սակայն, թոյլատրեց ինձ – որպէս բացառութիւն – կարողալ Ձեր նամակը, ըմբռնելով՝ թէ որքան կարիք ունէք աղօթքի յատուկ օգնութեան¹:

Վստահեցնում եմ Ձեզ, Մեծարգոյ Եղբայր, որ անում եմ այն ամէնը, որ մտնում է ուժերիս սահմաններից ներս, ընդունելու համար այն շնորհները, որ հարկաւոր են Ձեզ: Այդ շնորհներն անկասկած կ'ընդունէք, որովհետեւ մեր Տէրը երբեք չի պահանջում մեզնից զոհողութիւններ, որոնք գերազանցում են մեր ուժերին: Որոշ անգամներ, այո՛, այս պաշտելի Փրկիչը զգացնում է մեզ գաւաթի ամբողջ դառնութիւնը, որ առաջարկում է մեր հոգիներին: Երբ պահանջում է զոհել այն ամէնը, որ մեր ամենասիրելին է այս աշխարհում, անհնարին է, առանց մի բացառիկ շնորհի օգնութեան, չաղաղակէլ՝ ինչպէս Ինքը Ձիթենեաց պարտէզում. «Հայր, հեռացրու ինձնից այս բաժակը: Բայց թող Քո՛ կամքը կատարուի, ո՛չ իմը»²:

Մեր համար շատ ու շատ մխիթարական է մտածելը, որ Յիսուս, հզօրն Աստուած, փորձառութեամբ ճանաչել է մեր տկարութիւնները, որ դողացել է ի տես դառն գաւաթի, այն նոյն գաւաթի, որն առաջ անձկութեամբ էր փափաքում խմել:

Ձեզ վիճակուած մասը, Մեծարգոյ, յիրաւի գեղեցիկ է, որովհետեւ այն մասն է, որ Յիսուս ընտրեց իր համար եւ Նա Ինքը առաջին հերթին մօտեցրեց շուրթերն այն բաժակին, որն այժմ առաջարկում է Ձեզ:

Սրբերից մէկն ասում է. «Մեծարգոյն պատիւը, որ Աստուած կարող է շնորհել որեւիցէ մի հոգու, ոչ թէ նրան շատ տալն է, այլ՝ նրանից շատ պահանջելը»: Յիսուս, ուրեմն, կամենում է Ձեզ առանձնաշնորհուած տեսնել: Կամենում է, որ այժմ իսկ սկսէք հոգիների փրկութեան Ձեր առաքելութիւնը, շնորհիւ տառապանքի: Մի՞թէ չարչարուելով ու մեռնելով չէ, որ Նա փրկեց աշխարհը: Գիտեմ, որ ծարաւն ունէք

¹ Իր Նոյեմբեր ամսուայ նամակում, Թերեզայի հոգեւոր եղբայրը, որն այնժամ գտնուում էր Լագրունում (Քալուադոս), իր ընտանիքի մօտ, խօսում էր իր առաքելական կոչման մասին եւ մատնանշում էր նաեւ այն խոր ցաւը, որ պատճառում էր իրեն ծնողներին եւ բոլոր սիրելիներին լքելու, նրանցից հեռանալու (այդժամ թէկուզեւ միայն ծրագրուած) հեռանկարը:

² Մտթ 26, 39; Մրկ 14, 36; Ղկս 22, 42

Ձեր կեանքը աստուածային Վարդապետի համար զոհեցնել փառքի, բայց ասում եմ Ձեզ, թէ սրտի մարտիրոսութիւնը պակաս պտղաւատ չէ, քան արեան հեղումը, եւ այս վայրկեանից սկսած Ձեր մարտիրոսութիւնը սա է: Հետեւաբար, իրաւացի ու հիմնաւոր է ասածս՝ թէ Ձեզ վիճակուած մասը գեղեցիկ է, վայել է Քրիստոսի առաքեալին:

Մեծարգոյ Եղբայր, եկել էք մխիթարութիւն փնտռելու նրա մօտ, որին Յիսուս նուիրել է Ձեզ իբրեւ քոյր, եւ ունէք այդ իրաւունքը: Քանի որ մեր վերապատուելի Մայրը թոյլատրում է ինձ գրել, կամենում եմ համապատասխանել այն քաղցր առաքելութեանը, որ վստահուել է ինձ, զգալով հանդերձ՝ թէ որեւիցէ մէկին մխիթարելու ամենապահօժ միջոցը աղօթքի ու տառապանքի միջոցն է: Աշխատենք միասին՝ հոգիների փրկութեան գործում: Մեր տրամադրութեան տակ միայն մի օր ունենք, միակ օրն այս կեանքի, նրանց փրկելու եւ այսպիսով Տիրոջ հանդէպ մեր սիրոյ գրաւականն ու ապացոյցը փաստելու համար: Այս վերոյիշեալ օրուայ վաղը լինելու է յաւիտենականութիւնը. այնժամ Յիսուս հարիւրապատիկ կը վերադարձնի Ձեզ այն քաղցրիկ ու հոգեհարազատ ուրախութիւնները, որոնք այժմ ընծայաբերում էք իրեն: Նա շատ լաւ գիտէ Ձեր զոհողութեան կշիռը: Բայց չէ՞ որ Նա նոյնպէս կրեց այս մարտիրոսութիւնը՝ ի փրկութիւն մեր անձերի: Լքեց իր Մօրը, տեսաւ անարատ Կոյսին խաչի ստորոտում, տեսաւ նաեւ այն վշտանիւթ սուրը, որ խոցեց այդ գործվալի Մօր սիրտը. յուսով եմ, որ մեր աստուածային Փրկիչը կը մխիթարի իր սիրելի Մօրը. սա խնդրում եմ իրենից անդադար: Ա՛հ, եթէ մեր աստուածային Վարդապետը թոյլատրէր նրանց, որոնց Դուք պատրաստուում էք թողնել յանուն իր սիրոյ, եթէ նրանց թոյլատրէր նախապէս տեսնել այն փառքը, որ Նա վերապահել է իրենց, եւ այն բազմութիւնը հոգիների, որոնք Ձեր պարծանքն են կազմելու Երկնքում, իրենց արդէն իսկ վարձատրուած կը զգային այն մեծ զոհողութեան փոխարէն, որն իրենց պատճառում է Ձեր մեկնումը:

Մեր Մայրը դեռ վատառողջ է, թէեւ արդէն մի քանի օր է, ինչ մի քիչ աւելի լաւ է զգում իրեն: Յուսով եմ, որ Մանուկն Յիսուս մի փոքր աւելի կը զօրացնի նրան այս անգամ. այդ ուժերն ինչպէս միշտ ծառայելու են իր փառքին: Այս վերապատուելի Մայրը Ձեզ է առաքում Սուրբ Տրանչիսկոս Աստիգացու նկարը, որպէսզի Սուրբը ուսուցանի Ձեզ այս կեանքի նեղութիւնների ու պայքարների բովում հոգու իրական զուարթութիւնը գտնելու միջոցը: Յուսով եմ, Մեծարգոյ Եղբայր, որ կը շարունակէք աղօթել իմ համար, որ հրեշտակ չեմ, ինչպէս կարծում էք Դուք, այլ բաւական անկատար խեղճ փոքրիկ կարմեղական միանձնուհի, որը սակայն, հակառակ իր ոչնչութեանը, կամենում է, ինչպէս Դուք, աշխատել մեծն Աստծոյ փառքի համար:

Մնանք ցմիշտ Մանուկ Յիսուսի օրօրոցի մօտ միացած, շնորհիւ աղօթքի ու տառապանքի:

Ձեր անարժան քոյրիկ
Թերեզա Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի
անարժանաբար՝ կարմեղական միանձնուհի

3. Դարձի եկած մեծագոյն մեղաւորների օրինակով, ինչպիսիք էին Սուրբ Մարիամ Մագդաղեանցին եւ Սուրբ Օգոստինոսը, եւ նոյն իր իսկ օրինակով՝ Թերեզան իր հոգեւոր եղբորը քաջալերում է անվերապահ կերպով յանձնուելու Աստծոյ ողորմութեանը:

Սիրելի Եղբայր իմ,

Ձեր հետ միասին երախտագիտութիւնս եմ յայտնում մեր Տիրոջը, Հոգեգալստեան օրը Ձեզ պարգեւած մեծ շնորհի համար: Յիրաւի, ճիշտ այդ գեղեցիկ տօնի օրն էր (տասը տարի առաջ), որ ես նոյնպէս թոյլտուութիւնը ստացայ – ոչ թէ հոգեւոր առաջնորդիցս, այլ սիրելի Հօրիցս – առաքեալ դառնալու Կարմեղոսում: Ահա մի զուգադիպութիւն, որ առաւել եւս միաւորում է մեր հոգիները:

Եղբայր իմ, թող երբեք չայցելի Ձեզ այն միտքը՝ թէ Ձեր մասին երկար խօսելով «ձանճրացնում կամ ցրում էք պատճառում ինձ»: Հնարաւոր է արդեօք, որ մի քոյր չհետաքրքրուի այն ամէնով՝ ինչ վերաբերւում է իր եղբօրը: Իսկ ցրման մասին մտահոգուելու հարկ չկայ: Ձեր նամակներն, ընդհակառակը, նոր աւելնով մղում են ինձ դէպի մարդասէրն Աստուած, քանի որ հնարաւորութիւնն եմ ստանում անմիջական կերպով զմայլուելու իր ողորմութեան ու սիրոյ հրաշակերաներով: Յիսուս երբեմն նպատակայարմար է գտնում «յայտնել իր գաղտնիքներն ամենափոքրերին»¹: Ահա կրկին ու կրկին ձեռքերիս մէջ է այս իրողութեան փաստը, որովհետեւ Ձեր 15 Հոկտ. 1895 թուակիր նամակն ընթերցելուց յետոյ համակարծիք գտնուեցի Ձեր հոգեւոր առաջնորդի հետ: Դուք իրաւունք չունէք սուրբ լինելու կիսով չափ, հարկաւոր է՝ որ այդպիսին լինէք ամբողջութեամբ, հակառակ դէպքում՝ լաւ է թէ ընդհանրապէս չլինէք: Հասկացայ, որ եռանդուն հոգի ունէք, եւ այս իսկ պատճառով երջանիկ եմ Ձեր քոյրը կոչուելուս համար: Մի՛ կարծէք, թէ սարսափեցնում էք ինձ՝ խօսելով Ձեր «կորած գեղեցիկ տարիների» մասին: Ինչ վերաբերւում է ինձ, երախտագիտութիւնս եմ յայտնում Յիսուսին, Ձեզ սիրալի հայեացքով դիտած լինելու համար, ճիշտ ինչպէս Աւետարանում յիշուող երիտասարդին²: Առաւել երջանիկ, քան վերջինս, Դուք հաւատարմութեամբ պատասխանեցիք Աստուածային Ուսուցչի կանչին, եւ Նրան հետեւելու համար՝ մի կողմ թողեցիք ամէն բան, ամենագեղեցիկ տարիքում, տասնութ տարեկան հասակում:

Ա՛հ, Եղբայր իմ, կարող էք իմ հետ գովերգել Տիրոջ ողորմութիւնը, որ փայլում է Ձեզնում իր ամբողջ շողարձակմամբ: Դուք Ձեզ հոգեպէս աւելի տրամադրուած էք զգում հանդէպ Սուրբ Օգոստինոսի, Սրբուհի Մագդաղէնացու. այս հոգիների, որոնց «անհամար մեղքերը ներուեցին իրենց, որովհետեւ շատ սիրեցին»³: Ես նոյնպէս սիրում եմ նրանց, սիրում եմ նրանց զղջումը եւ յատկապէս՝ նրանց սիրոյ համարձակութիւնը: Երբ մտքիս աչքերի առջեւ ուրուագծում եմ պատկերը, թէ ինչպէս է Մագդաղէնացին բազմաթիւ հրաւիրուածների ներկայութեամբ ընթանում դէպի պաշտելի Վարդապետը, Նրա ոտքերը արցունքներով ողողելու համար, ոտքեր՝ որոնց հպում է առաջին անգամ, զգում եմ, որ նրա սիրտը ըմբռնել էր Յիսուսի Սրտի սիրոյ ու ողորմութեան անյատակ խորութիւնը, եւ որ, որքան էլ մեծ մեղաւորուհի որ լինէր, այդ սիրովառ Սիրտը ո՛չ միայն տրամադիր էր նրան ներելու, այլ նաեւ շուայօրէն նրան պարգեւելու իր աստուածային մտերմութեան գանձերը, բարձրացնելու նրան մինչեւ սրբութեան ու հայեցողութեան ամենավերին գագաթները:

Իմ շատ սիրելի Եղբայր, այն օրից ի վեր, ինչ ինձ նոյնպէս շնորհուել է ըմբռնել Յիսուսի Սրտի սէրը, խոստովանում եմ, որ այդ սէրը սրտիցս դուրս է

¹ Մտթ 11, 25; Ղկս 10, 21
² Հմմտ. Մրկ 10, 21
³ Ղկս 7, 47

վունդել բոլոր տեսակի կասկածներն ու վախերը: Յանցանքներն յիշատակն, այո՛, խոնարհեցնում է ինձ, դրդում է այլևս չվստահելու իմ ուժերին, որոնք գոյութիւն անգամ չունեն: Բայց այս բոլորից աւելի, այդ յիշատակը խօսում է ինձ սիրոյ ու ողորմութեան մասին: Երբ որդիական կատարեալ վստահութեամբ այդ յանցանքները նետուում են Սիրոյ սպառիչ հնոցի մէջ, ինչպէ՞ս կարող են դրանք չանէանալ մէկընդմիջաւ:

Գիտեմ, որ կան շատ Սրբեր, որոնք իրենց կեանքն անց են կացնում անհաւանական ճգնութիւնների մէջ, քաւելու համար իրենց մեղքերը: Բայց մի՛ մոռացէք. «Երկնաւոր Հօր տանը բազում օթեւաններ կան»¹: Յիսուսի խօսքերն են սրանք եւ սրանցով յուսապնդուելով է, որ քայլում եմ իմ համար իր իսկ կողմից գծուած արահետով: Աշխատում եմ այլևս չզբաղուել ինձնով ոչ մի բանում, եւ այն ամէնը՝ ինչ Յիսուս կատարում է իմ հոգում, յանձնում եմ իրեն, վստահում եմ իրեն, որովհետեւ խստակեաց կեանքը չեմ ընտրել անձիս յանցանքները քաւելու համար, այլ՝ քաւելու համար յանցանքներն այլոց:

Հէնց նոր վերընթերցեցի նամակս եւ հարցնում եմ ինքս ինձ, թէ արդեօք կը կարողանա՞ք հասկանալ ինձ, որովհետեւ շատ վատ եմ արտայայտել մտքերս: Մի՛ կարծէք՝ թէ պախարակում եմ Ձեր զղումը, որ զգում էք Ձեր յանցանքներին ի տես, ինչպէս նաեւ Ձեր պատրաստակամութիւնը՝ քաւելու դրանք: Առաջարկում եմ Ձեզ ա՛յլ բան. այժմ երկուսով ենք եւ առաջադրանքը կարող ենք ի կատար ածել աւելի կարճ ժամանակամիջոցում (եւ ես իմ գործելակերպով աւելին կ'անեմ, քան Դուք): Այսպիսով յուսով եմ, թէ մի օր Յիսուս կ'առաջնորդի Ձեզ այն նոյն ուղիով, որով ընթանում եմ ես ինքս:

Ներողամիտ եղէք, Եղբայր իմ, չգիտեմ՝ թէ ինչ է կատարում հետս այսօր. գրում եմ ճիշտ այն՝ ինչ չէի կամենում գրել:

Թղթի վրայ այլևս տեղ չունեմ շարունակելու համար, պատասխանելու համար Ձեր հարցերին. դա կ'անեմ յաջորդ նամակում: Շնորհակալութիւն, որ գրել էիք Ձեր կեանքում տեղի ունեցած կարեւոր իրադարձութիւնների տարեթուերը: Արդէն տօնեցի Ձեր քսաներեքերորդ տարեդարձը: Աղօթում եմ Ձեր ծնողների համար, որոնց Աստուած կանչել է Իր մօտ, եւ չեմ մոռանում նաեւ Ձեր թանկագին մօրաքրոջը, որը Ձեզ շատ է սիրում:

Ձեր անարժան քոյրիկ
Թերեզա Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի
անարժանաբար՝ կարմեղական միանձնուհի

4. Վստահեցնում է իր հոգեւոր եղբօրը, որ երբ ինքն այլևս նաւահանգստում կը լինի, նրան կ'ուսուցանի աշխարհի փոթորկայոց ծովում նաւարկելու արուեստը. այն է՝ մանկան սիրով ու վստահութեամբ, որը գիտէ՝ թէ Հայրը սիրում է իրեն եւ միայնակ չի թողնում ու չի թողնելու երբեք:

Յ. Մ. Յ. Թ.

18 Յուլիսի 1897

Յիսուս †

¹ Յվհ 14, 2

Իմ խեղճ¹ ու սիրելի Եղբայր,

Ձեր վիշտը ինձ խորապէս յուզում է, բայց ահա տեսէք՝ թէ որքան բարի է Յիսուս: Հնարաւորութիւն է տալիս ինձ գրելու եւ այսպիսով Ձեր համար մխիթարութիւն հայթայթելու փորձեր կատարելու. եւ անկասկած՝ սա չի լինելու վերջին անգամը: Այդ քաղցրիկ Փրկիչը լսում է Ձեր ողբն ու աղօթքները. այդ իսկ պատճառով է, որ տակաւին թողնում է ինձ երկրի վրայ: Մի՛ կարծէք, թէ սա տհաճութիւն է պատճառում ինձ: Ո՛չ, իմ սիրելի Եղբայր, ընդհակառակն, որովհետեւ Յիսուսի այս վարուելաձեւում տեսնում եմ՝ թէ որքան է Ձեզ սիրում:

Անկասկած շատ վատ եմ բացատրել մտքերս իմ նախորդ նամակում, որովհետեւ գրում էք, թէ՛ «չեմ համարձակում խնդրել այն բերկրանքը, որ Դուք զգում էք երանութեանը աւելի ու աւելի մօտենալով»: Ա՛հ, եթէ կարողանայիք գէթ մի պահ միայն կարդալ հոգուս խորքերը, ինչպիսի՛ անակնկալի կը մատնուէիք: Երկնային երանութեան մասին միտքը ոչ միայն չի ծնում ինձնում որեւէ ուրախութիւն, այլ շատ անգամներ ինքս ինձ ուղղակի հարցնում եմ՝ թէ ինչպէ՞ս կարող եմ երջանիկ լինել առանց տառապանքի: Յիսուս անկասկած լիովին փոխելու է հուժիւնս, այլապէս ամբողջ յաւիտենականութեան ընթացքում կ'ողբայի՝ տառապանքից ու արցունքների այս հովտից զրկուած լինելու համար: Մարդասէրն Աստծուց երբեք չեմ խնդրել մեռնել երիտասարդ հասակում. նմանօրինակ խնդրանքները ինձ փոքրոգութիւն կը թուային: Բայց Նա մանկութիւնիցս ի վեր կամեցաւ տալ ինձ ներքին մի խոր համոզում, ըստ որի՝ պանդխտութեանս ընթացքը լինելու է կարճատեւ: Հետեւաբար, Տիրոջ կամքը կատարելու միտքն է միայն, որ կազմում է իմ ամբողջ երջանկութիւնը:

Եղբայր իմ, որքան կ'ուզէի Ձեր սրտի անօթի մէջ հեղել մխիթարութեան բալասանը: Ա՛յլ բան չեմ կարող անել, եթէ ոչ միայն՝ կրկնել Վերջին Ընթրիքի Ժամանակ Յիսուսի կողմից արտասանուած խօսքերը: Վստահ եմ, որ տհաճութիւն չեմ պատճառի իրեն, որովհետեւ իր փոքրիկ հարսնացուն եմ, եւ հետեւաբար՝ իր ունեցուածքը պատկանում է նաեւ ինձ: Կրկնում եմ Ձեզ, ուրեմն, այն՝ ինչ Նա ասում էր իր մտերիմներին. «Գնում եմ Հօրս մօտ: Սակայն, որովհետեւ ձեզ այս բաներն ասացի, տրամոլութիւնը լցրեց ձեր սրտերը: Բայց ես ճշմարիտն եմ ասում ձեզ. լաւ է ձեր համար, որ ես գնամ: Դուք այժմ տրտում էք, բայց ես կրկին տեսնելու եմ ձեզ, եւ ձեր սրտերը ուրախանալու են. եւ ձեր ուրախութիւնը ոչ ոք չի կարողանալու ձեզնից հեռացնել»²: Այո՛, վստահ եմ, որ դէպի կեանք մուտք գործելուցս յետոյ սիրելի Եղբօրս տրամադրութիւնը կը փոխուի ջինջ ու վճիտ բերկրանքի, որը ոչ մի արարած չի կարողանայ խլել նրանից:

Մենք, զգում եմ, պարտաւոր ենք միեւնոյն ճանապարհով քայլել դէպի Երկինք. այն է՝ սիրոյն միացած տառապանքով: Երբ այլեւս նաւահանգստում կը լինեմ, կ'ուսուցանեմ Ձեզ, իմ հոգու սիրելի Եղբայր, թէ ինչպէս պէտք է նաւարկէք ընդմէջ այն փոթորկայոյց ծովի, որ կոչւում է աշխարհ. մանկական սիրով ու վստահութեամբ, որով այդ փոքրիկ հոգիները համոզուած են՝ թէ Հայրը սիրում է իրենց եւ չի կարող իրենց միայնակ թողնել վտանգի պահին:

Ա՛հ, որքան կ'ուզէի հասկացնել Ձեզ Յիսուսի Սրտի քնքշանքը, նաեւ այն՝ ինչ սպասում է Ձեզնից: Ձեր այս ամսուայ նամակը ցնծութեամբ լցրեց սիրտս: Հասկացայ առաւել քան երբեք, թէ մինչեւ որ աստիճան են մեր հոգիները նման միմեանց, որովհետեւ տեսայ՝ որ Դուք նոյնպէս կանչուած էք առ Աստուած բարձրանալու

¹ Իր 6 Յուլ. 1897 թուակիր նամակում, որին այժմ պատասխանում է Սրբուհին, Թերեզայի հոգեւոր եղբայրը սրտածմբիկ խօսքերով արտայայտում էր այն ցաւը, որ իրեն պատճառում էր իր հոգեւոր քրոջ մօտակայ անխուսափելի մահը:

² Յվհ 16, 5-7. 22

չնորհիւ սիրոյ վերելակի, եւ ոչ թէ սարսափի անհարթ ու դժնդակ աստիճաններով: Ինձ չի գարմացնում այն հանգամանքը, որ Յիսուսի հետ բարեկամութեան, ընտանի մտերմութեան գործադրումը թւում է Ձեզ մի քիչ դժուար իրագործելի: Հնարաւոր չէ հասնել դրան մի օրում, բայց վստահ եմ, որ Ձեզ աւելի շատ կ'օգնեմ ընթանալու այդ խնկաբոյր ճանապարհով երբ այլեւս ազատուած կը լինեմ իմ այս մահկանացու բանտից, եւ շատ շուտով ի վիճակի կը լինէք կրկնելու Սուրբ Օգոստինոսի հետ. «Մէրն այն բեռն է, որ քաշում է ինձ»¹:

Կ'ուզէի փորձել հասկացնել Ձեզ, մի պարզունակ համեմատութեան միջոցով, թէ Յիսուս որքան է սիրում այն անձանց, որոնք նոյնիսկ անկատար լինելով՝ վստահում են իրեն:

Ենթադրենք, թէ մի հայր ունի երկու որդի, երկուսն էլ կարճամիտ ու անհնազանդ: Մի օր, երբ վերջիններիս անկարգութիւնների համար հայրը կամենում է պատժել նրանց, տեսնում է, որ նրանցից մէկը դողում է ու, մի անկիւն քաշուելով, սարսափահար կծկւում, սրտում ունենալով հանդերձ պատժին արժանացած լինելու խոր զգացում: Մինչդեռ միւսը հօր գիրկն է նետւում ասելով, որ զղում է նրան պատճառած վշտի համար, որ սիրում է նրան եւ որ այդուհետեւ ընթանալու է արդարութեան շաւիղներում: Եւ եթէ այսքանից յետոյ այդ պատանին ուղղակի խնդրի հօրը պատժել իրեն մի համբոյրով, չեմ կարծում՝ թէ այդ բախտաւոր հօր սիրտը կը կարողանայ դիմադրել իր գաւակի որդիական վստահութեանը, գաւակ՝ որի անկեղծութիւնն ու սէրը յայտնի են իրեն: Այդ հայրը չի անգիտանում, անշուշտ, որ որդին մէկից աւելի անգամներ ակամայ ընկնելու է իր նոյն թերութիւնների մէջ, բայց տրամադիր է միշտ ներելու նրան, եթէ նա միշտ բռնի իրեն սրտի կողմից: Միւս որդու մասին, սիրելի Եղբայր իմ, չեմ ասում ոչինչ: Դուք ինքներդ կարող էք հասկանալ, որ հայրը կարող է սիրել նրան նոյնքան եւ վարուել նրա հետ միեւնոյն ներողամտութեամբ, ինչպէս վստահասիրտ եղբօր հետ:

Բայց ինչո՞ւ եմ գրում Ձեզ վստահութեան ու սիրոյ մասին: Մտքերս բացատրում եմ այնքան վատ, որ հարկադրուած եմ սպասել Երկնքին, Ձեզ այդ երջանիկ կեանքի մասին խօսելու համար: Այսօրուայ նպատակս պարզապէս Ձեզ մխիթարելն էր: Քանիցս երջանիկ կը լինէի, եթէ Դուք նոյնպէս ընդունէիք իմ մահն այնպէս՝ ինչպէս այն ընդունում է մայր Ազնէս Յիսուսին: Դուք բնականաբար չգիտէք, որ նա ինձ քոյր է կրկին անգամ, եւ որ իմ համար մայր է եղել մանկութեանս օրերին: Մեր վերապատուելի Մայրը մեծապէս վախենում էր, թէ նրա դիւրագգեաց նկարագիրն ու իմ հանդէպ տածած մեծ սէրը չափազանց դառն կը դարձնէին իր համար մեկնումս: Բայց կատարուեց ճիշտ հակառակը. նա մահուանս մասին խօսում է ինչպէս մի տօնի մասին, եւ սա է իմ համար մեծագոյն մխիթարութիւնը:

Խնդրում եմ Ձեզ, Եղբայր իմ, Դուք նոյնպէս աշխատէք այսպէս վարուել եւ համոզուել, որ փոխանակ կորցնելու՝ կը գտնէք ինձ, եւ ես չեմ լքի Ձեզ երբեք:

Միեւնոյն շնորհը խնդրեցէք նաեւ մեր վերապատուելի Մօր համար, որը շատ է սիրում ինձ, եւ ես սիրում եմ իրեն է՛լ աւելի, որովհետեւ նա իմ տեսանելի Յիսուսն է: Սիրով կը տայի Ձեզ այն՝ ինչ խնդրում էք², եթէ աղքատութիւն ուխտած չլինէի, որի հետեւանքում՝ չեմ կարող տնօրինել մի փոքրիկ նկար անգամ: Մեր վերապատուելի Մայրն է միայն, որ կարող է ընդառաջել Ձեզ, եւ գիտեմ, որ դրական կը պատասխանի Ձեր խնդրանքներին: Այս առումով. ի նկատի ունենալով մօտակայ

¹ Սր. Օգոստինոս, Խոստովանութիւններ ԺԳ 9. 10.

² Թերեզայի հոգեւոր եղբայրը գրում էր. «Խնդրում եմ ինձ որպէս յիշատակ թողնել Ձեզ պատկանած առարկաներից որեւէ մէկը, եթէ յարմար էք գտնում ինչպէս խնդրելու»:

մահս, միաբանակից քոյրերիցս մէկը լուսանկարեց ինձ մեր Մօր անուան սօնի կապակցութեամբ: Նորընծայուհիները, երբ տեսան այդ նկարները, բոլորը միաձայն հաստատեցին՝ թէ չափազանց հանդիսաւոր կերպարանք էի ընդունել: Թւում է՝ թէ սովորաբար աւելի ժպտուն եմ, բայց հաւատացէք ինձ, Եղբայր իմ, որ թէեւ չի ժպտում Ձեզ իմ լուսանկարը, հոգիս չի դադարելու երբեք Ձեզ ժպտալուց, երբ այլեւս Ձեր կողքին կը լինի, Ձեզ մարտակից:

Յտեսութիւն, իմ շատ սիրելի Եղբայր, վստահ եղէք, որ յաւիտեան լինելու եմ Ձեր իրական քոյրը:

Թերեզա Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի
անարժանաբար՝ կարմեղական միանձնուհի

5. Իր յաւիտեանութիւն մուտք գործելուց յետոյ խոստանում է նրան եղբայրական այնպիսի մտերմութիւն, որ հմայք կը պատճառի հրեշտակներին անգամ: Իսկ մինչ այդ, հրաւիրում է նրան հետեւելու իրեն՝ առ Աստուած որդիական սիրոյ ճանապարհում: Պատասխանելով իր հոգեւոր եղբոր հարցերից մէկին, կարճաօտ կերպով պատմում է նրան իր ընտանիքի պատմութիւնը:

Յ. Մ. Յ. Թ.

26 Յուլիսի 1897

Յիսուս †

Իմ սիրելի Եղբայր,

ինչ մեծ հաճոյք պատճառեց ինձ Ձեր նամակը: Եթէ Յիսուս ընդունեց Ձեր աղօթքները եւ դրանց պատասխանելով երկարաձգեց աքսորս, պէտք է ասեմ, որ Նա ըստ Իր ողորմած սիրոյ ունկնդրեց նաեւ իմ աղօթքները, որովհետեւ Դուք – ինչպէս եզրակացնում եմ Ձեր նամակի վրայ հիմնուելով – համակերպուել էք կորցնելու «իմ տեսանելի ներկայութիւնն ու ներգործութիւնը»: Ա՛հ, Եղբայր իմ, Աստուած շատ աւելի քաղցր անակնկալներ է պատրաստում Ձեր համար: Դուք «այնքան էլ վարժ չէք գերբնական իրողութիւններին», Ձեր իսկ խօսքերի համաձայն, եւ ես, որ առանց որեւէ պատճառի չէ՛ որ Ձեր քոյրն եմ, խոստանում եմ Ձեզ հնարաւորութիւնը տալ ճաշակելու, դէպի յաւիտենութիւն մուտք գործելուցս յետոյ, այն երջանկութիւնը, որ բխում է մեր կողքին մի բարեկամ անձի ներկայութեան զգացումից: Այլեւս չի խօսուի նամակագրական կապի մասին, ինչպիսին ներկան է, առաւել կամ նուազ յաճախակի, բայց միշտ էլ շատ անկատար (ինչի համար թւում է՝ թէ տրտնջում էք), այլ՝ եղբայրական մտերիմ զրոյցի, որ հիացում կը պատճառի հրեշտակներին անգամ: Մի բարեկամութիւն, որ արարածները չեն կարողանայ այպանել, որովհետեւ ծածկուած կը մնայ նրանց հայեացքից:

Ա՛հ, իմ համար քանիցս գրաւիչ է այս մահկանացու մարմնից ազատուելու հեռանկարը, այս մարմնից, որը, եթէ մի անհնարին ենթադրութեան համաձայն՝ գտնուէի Եղբօրս հետ միասին նաեւ ա՛յլ անձանց ներկայութեամբ, կը հարկադրէր ինձ դիտել նրան իբրեւ օտարական, իբրեւ որեւիցէ մի անծանօթ:

Բայց խնդրում եմ Ձեզ, Եղբայր իմ, մի՛ նմանուէք հրեաներին, որոնք կարօտով էին յիշում «Եգիպտոսի սոխերը»¹: Այն օրից ի վեր, ինչ սկսել եմ գրել Ձեզ, միայն

¹ Թց 11, 5

յագեցրել եմ Ձեզ այդօրինակ բոյսերով, որոնք ստիպում են արտասուել, եթէ աչքերին են մօտեցնում անեփ վիճակում: Մինչդեռ այժմ երազանքս է Ձեր հետ կիսել այն «Թաքնուած մանանան»¹, որն Ամենակարողը խոստացել է յաղթողներին միայն:

Միմիայն իր Թաքնուած լինելու պարագայի համար է, որ այս երկնային մանանան նուազ հրապուրիչ է՝ քան «Շգիպտոսի սոխերը», բայց անկասկած, երբ այլևս հնարաւորութիւնը կ'ունենամ մատուցելու Ձեզ զուտ հոգեւոր կերակուրներ, չէք շարունակի ողբալ այն, որ կը կարողանայի պարգեւել, եթէ դեռ երկար օրեր մնացած լինէի երկրի վրայ:

Ա՛հ, Ձեր հոգին բաւական մեծ է եւ չի կարող կապնուել այստեղի միսիթարութիւններին: Պարտաւոր էք սկսել ապրել Երկնքում, ահա այս վայրկեանից ի վեր, որովհետեւ գրուած է. «Ուր ձեր գանձերն են, այնտեղ կը լինեն նաեւ ձեր սրտերը»²: Մի՞թէ Յիսուս Ինքը չէ Ձեր միակ գանձը: Իսկ քանի որ Նա Երկնքում է, այնտեղ պէտք է բնակուի նաեւ Ձեր սիրտը: Ձեզ սա ասում եմ ամենայն պարզութեամբ, Եղբայր իմ: Ձեր համար աւելի հեշտ կը լինի ապրել Յիսուսի հետ, երբ ես այլևս ընդմիշտ իր մօտ կը լինեմ:

Իրօք, պէտք է շատ վատ ճանաչէք ինձ, վախի զգացումներ ունենալ կարողանալու համար՝ թէ Ձեր թերութիւններին մանրամասն տեղեկանալը կարող է նուազեցնել այն գորովը, որ ունեմ Ձեր հանդէպ: Ա՛հ, Եղբայր իմ, վստահ եղէք նաեւ, որ կարիքը չեմ ունենայ «ձեռքս Յիսուսի բերանին դնելու»՝ այդ թերութիւնների թուարկումը դադարեցնելու համար: Նա մոռացութեան է մատնել Ձեր բոլոր անհաւատարմութիւնները. Նրա առջեւ ներկայ են կատարելութեանը ձգտող Ձեր իղձերը միայն, իսկ այս վերջինները զուարթութեան ակունք են իր սրտի համար:

Աղաչում եմ Ձեզ, այլևս «մի՛ տարածուէք Նրա ոտքերի առաջ», այլ հետեւէք այն «առաջին ազդակին, որը Ձեզ մղում է դէպի Իր հայրական գիրկը»: Սա՛ է Ձեր տեղը, եւ ես մէկից աւելի անգամներ փաստեր եմ գտել Ձեր նամակներում, որ Ձեզ արգելուած է դէպի Երկինք քայլել մի ա՛յլ ճանապարհով, տարբեր՝ Ձեր խեղճ փոքրիկ քրոջ ուղուց:

Բացարձակ կերպով համաձայն եմ Ձեր հետ. «աստուածային Սիրտը աւելի է տրամուծում իր բարեկամների հազարաւոր փոքրիկ անփափկանկատութիւնների, քան աշխարհում կորած հոգիների նոյնիսկ ծանր յանցանքների համար»: Եւ սակայն, իմ փոքրիկ սիրելի Եղբայր, ինձ թւում է՝ թէ դա տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ իրենները չեն նկատում, չեն անդրադառնում իրենց շարունակական պակասութիւններին, երբ դրանք սովորութեան են վերածում եւ ներում անգամ չեն խնդրում դրանց համար: Ահա այսպիսի դէպքում է, որ Յիսուս արտասանում է այն յուզիչ խօսքերը, որոնք Եկեղեցին յանուն իր կրկնում է Աւագ Շաբաթուայ ընթացքում. «Այս վէրքերը, որ տեսնում էք ձեռքերիս վրայ, ստացայ նրանց տանը, ովքեր սիրում էին ինձ»³: Բայց նրանց պարագային, որոնք ոչ միայն սիրում էին, այլ շարունակում են սիրել իրեն եւ գալիս են, իւրաքանչիւր ակամայ անհաւատարմութիւնից յետոյ, խնդրելու իրենից ներում, փարուելով իրեն այժմ՝ ամաչելով, բայց նաեւ վստահութեամբ, Յիսուս ցնծում է ուրախութիւնից: Նա ասում է իր հրեշտակներին այն՝ ինչ անառակ որդու հայրն ասում էր իր ծառաներին. «Կրկին հագրէք նրան իր նախկին պատմուճանը, մատանին նրա ձեռքը տուէք, ուրախանանք բոլորս»⁴: Ա՛հ, Եղբայր իմ, որքա՛ն քիչ են ճանաչուած Յիսուսի բարութիւնն ու ողորմած սէրը:

¹ Յյտ 2, 17

² Մտթ 6, 21; Ղկս 12, 34

³ Զաք 13, 6

⁴ Հմմտ. Ղկս 15, 22-23

Ճիշտ է, Նրա գանձերը վայելելու համար հարկաւոր է խոնարհուել, համոզուել մեր անձի ոչնչութեանը: Հէնց սա է, որ շատ ու շատ հոգիներ չեն կամենում անել: Բայց Դուք վերջիններիս նման չէք վարուում, Եղբայր իմ, եւ ես այս փաստի վրայ հիմնուելով եզրակացնում եմ, որ պարզ ու սիրալի փտահոլութեան ուղին ստեղծուած է ճիշտ Ձեր համար: Կ'ուզէի, որ պարզ լինէք մարդասէրն Աստծոյ հետ, բայց նաեւ ... իմ հետ: Չարմանո՞ւմ էք արտայայտութեանս համար: Տեսէք, Եղբայր իմ, Դուք ինձնից ներողութիւն էք խնդրում Ձեր «անբաղաքավարութեան» համար, որը կայանում է այն հարցում, թէ աշխարհում արդեօք «Ժընըվիե» է եղել Ձեր քրոջ անունը: Նմանօրինակ հարցադրումն իմ համար ամբողջովին բնական է, եւ դա Ձեզ փաստելու համար՝ այստեղ կ'ուրուագծեմ ընտանիքիս վերաբերուող որոշ մանրամասներ, որոնց շուրջ մինչ այժմ ճշգրիտ տեղեկութիւններ չէք ունեցել:

Մարդասէրն Աստուած յարմար նկատեց պարգեւել ինձ աւելի Երկնքին՝ քան երկրին արժանի հայր ու մայր: Նրանք Տիրոջից խնդրեցին բազմաթիւ որդիներ պարգեւել իրենց, որպէսզի կարողանային դրանց բոլորին էլ իրեն վերընծայել: Այս խնդրանքն ընդունուեց Երկնքի կողմից: Չորս փոքրիկ հրեշտակները ճախրեցին դէպի Երկինք, իսկ մրցասպարէզում մնացած միւս հինգ դասերը նախընտրեցին իրենց կրօնքին կրել Յիսուսի զինանշանը: Հերոսական աննկուն քաջութիւն ցուցաբերեց հայրս, որն իբրեւ նորոգ Աբրահամ՝ երեք անգամ բարձրացաւ Կարմեղոսի լեռը, այնտեղ Աստծուն զոհելու համար այն՝ որն իր սրտի գանձերից ամենաթանկագինն էր այս երկրի վրայ: Նախեւառաջ ընծայուեցին երկու մեծերը: Ապա նրա դասերից երրորդը, իր հոգեւոր առաջնորդի խորհրդի համաձայն, եւ ինչպէս միշտ՝ ուղեկցուած մեր սիրելի հօր կողմից, կրօնաւորութեան մի փորձ կատարեց Այցելութեան Միաբանութեան վանքերից մէկում: (Մարդասէրն Աստուած, սակայն, բարի կամքով միայն գոհացաւ: Աւելի ուշ, նա վերադարձաւ աշխարհ, ուր ապրեց փակարանի միեւնոյն կեանքը): Աստուածային ընտրութեան համար մնում էին միայն երկու դասերը, որոնցից մէկը տասնութ տարեկան էր, միւսը՝ տասնչորս: Այս վերջինը, «փոքրիկ Թերեզան», խնդրեց նրանից արձակել իր կապերը, որպէսզի կարողանար թռիչք առնել դէպի Կարմեղոս: Մի բան, որ նա ստացաւ իր զմայլելի հօրից առանց որեւէ դժուարութեան: Այդ հօր սիրավառ սիրտը առաջնորդեց նրան նախ Բէյէոյ, ապա նաեւ Հռոմ, իրեն որպէս նպատակ ունենալով հարթումն այն խոչընդոտների, որոնք երկարաձգում էին ողջակիզումը նրա, ում ինքն անուանում էր «Իմ թագուհի»: Երբ սրան նոյնպէս հասցրեց նաւահանգիստ, ասաց իր մօտ մնացած միակ դասերը. «Եթէ կամենում ես հետեւել քոյրերիդ օրինակին, քեզ տալիս եմ իմ համաձայնութիւնը. դու ինձնով մի՛ մտահոգուիր»:

Հրեշտակը, սակայն, որ պարտաւոր էր նեցուկ կանգնել նմանօրինակ սրբի ծերութեանը, պատասխանեց՝ որ նրա Երկինք մեկնելուց յետոյ միայն կը սլանար դէպի փակարան. դա բերկրանքով լցրեց սիրտը նրա, ով ապրում էր միմիայն Աստծոյ համար:

Այսքան գեղեցիկ կեանքը, սակայն, պէտք է պսակուէր այդպիսի առաքինութիւններին պատշաճ փորձութեամբ: Վանք մտնելուցս քիչ ժամանակ անց, հայրս, որին մենք սիրում էինք եւ որն իսկապէս արժանի էր մեր սիրոյն, կրեց մի քանի կաթուածներ, որոնք անդամալուծեցին նրա ոտքերը. բայց մարտիրոսութիւնը չէր կարող կանգ առնել այդտեղ: Այդ դէպքում չափազանց նուրբ կը լինէր փորձութիւնը, որովհետեւ պէտք է հաշուի առնենք, որ վեհանձն նահապետը իրեն Աստծուն էր ընծայել որպէս զոհ: Այսպիսով, փոխելով իր ուղղութիւնը, կաթուածը հարուածեց մեծափառ զոհի գլխին, զոհ՝ որն ընդունելի էր եղել Տիրոջ կողմից: Թուղթս վերջանում է, եւ այլեւս տեղ չունեմ յուզիչ մանրամասները պատմելու համար: Ուզում եմ միայն ասել, որ անհրաժեշտ եղաւ խմել դառն բաժակը մինչեւ

վերջին կաթիլը ու երեք տարով բաժանուէլ մեր սիրելի հօրից, վստահելով նրան այժմ
աստուածավախ ու բարերար, բայց միշտ օտար ձեռքերի:

Նա սիրով ընդունեց այդ փորձութիւնը, ըմբռնելով հանդերձ դրա պատճառած
ամբողջ նուաստացումը, եւ այնքան առաջադիմեց իր հերոսութեան մէջ, որ
չկամեցաւ, որ աղօթեն իր բժշկման համար:

Մինչ նոր տեսութիւն Աստուծոյ մօտ, իմ փոքրիկ թանկագին Եղբայր, յուսամ՝ թէ
դեռ կը կարողանամ գրել Ձեզ, եթէ անշուշտ չսաստկանայ ձեռքերիս դողը, որը
ստիպեց ինձ գրել այս նամակը զանազան ընդմիջումներով:

*Ձեր փոքրիկ քոյրիկ, ո՛չ ժընըվիւէլ, այլ՝
Թերեզա Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի
անարժանաբար՝ կարմեղական միանձնուհի*

ՅԱԻԵԼՈՒԱԾ Դ.

ԹԷ ԻՆՉՈՒ ԵՄ ՔԵՉ ՍԻՐՈՒՄ, ՄԱՐԻԱՄ

1. Կամենում եմ այստեղ սաղմոսել, Մայր իմ, թէ ինչու եմ քեզ սիրում, եւ թէ ինչու է քո քաղցրիկ անունը սիրտս խնդուլթեան սարսուռով պատում: Եւ թէ ինչու խորհրդածումը երկնասլաց մեծութեանդ շուրջ չի ներշնչում սարսափ իմ հոգուն: Եթէ դիտէի քեզ վսեմաշուք փառքիդ մէջ, որն անհամեմատ գերազանց է՝ քան բոլոր ընտրեալների շողարձակումը, ա՛հ, չէի կարող հաւատալ, թէ քո զաւակն եմ, Մարիամ, եւ քո առջեւ կը խոնարհէի հայեացքս:

2. Որպէսզի փոքրիկը կարողանայ ամբողջովին նուիրուել իր մօրը, հարկ է՝ որ այս վերջինը լայ իր հետ, կիսի իր վշտերը: Դու, սրտիս Թագուհի, որքա՛ն արտասուեցիր կեանքիդ ընթացքում, ինձ դէպի քեզ ձգելու համար: Աւետարանի միջոցով կեանքիդ շուրջ խորհրդածելով է, որ համարձակում եմ հայել քեզ ու մօտենալ: ՂԺՈՒԱՐ չէ ինձ քո զաւակը կարծել, որովհետեւ տեսնում եմ քեզ մահկանացու եւ տառապանքներին ենթակայ, ինչպէս ես:

3. Աստուածային խորհրդի հրեշտակային աւետման պահին, երբ Մայր դարձար յաւիտեան տիրող Աստծուն, չմոռացար յիշատակել կուսութեան գանձը: Ըմբռնում եմ, այո՛, ով Կոյս Անարատ, որ հոգիդ Տիրոջն աւելի է գերադաս՝ քան դրախտը զմայլելի հրեշտակաբնակ: գիտեմ, որ այդ հոգիդ մաքրափայլ, խոնարհ հովիտը ծաղկազարդ, կրում է իր մէջ Յիսուսին, որ օվկիանն է սիրոյ:

4. Ես սիրում եմ քեզ, կոչում քեզ՝ Տիրոջ Աղախին, որ հմայում ես քո խոնարհութեամբ: Այս մեծամեծ առաքինութիւնը դարձնում է քեզ ամենակարող, իսկ սիրտդ՝ տաճար Ամենասուրբ Երրորդութեան: Սրա շնորհիւ է, որ սիրոյ Սուրբ Հոգու հովանու ներքոյ¹, Հօրն համահաւասար Որդին մարմնացաւ մարդացաւ քեզնում: Եւ քո միջոցով, ով Մայր մարդկութեան, եղբայրներն իր լինելու էին բազմաթիւ այնքան, որ ստիպուած կոչուեց «Յիսուս, քո անդրանիկը»²:

5. Շատ ու շատ փոքր եմ ես, Մարիամ, եւ դու տեղեակ ես իմ փոքրկութեանը: Սրանով հանդերձ, սակայն, ինձնում հիւրընկալում եմ Ամենակարողին: Տկարութիւնս նոյնպէս չի սարսափեցնում ինձ, քանի որ մօր հարստութիւնները պատկանում են նաեւ զաւակին: Ես քո դուստրն եմ, Մայր իմ շատ սիրելի: Առաքինութիւններդ ու սէրդ մի՞թէ իմը չեն: Նմանապէս, երբ Ամենասուրբ Հաղորդութեան միջոցով քո քաղցրիկ Գառնուկը Յիսուս իջնում է, հանգչում սրտիս մէջ, հոգուդ դղեակում է Նա կարծում իրեն:

6. Ո՛վ ընտրեալների Թագուհի, դու հասկացնում ես ինձ, թէ քայլ առ քայլ ՂԺՈՒԱՐ չէ հետեւելը քեզ դէպի Երկինք տանող նեղ արահետում³: Դու այն տեսանելի դարձրիր ամենապարզ առաքինութիւնների քո գործադրումով: Քո թիկունքում, Մարիամ, կամենում եմ մնալ փոքրիկ, ինչպէս հիմա: Շատ լաւ եմ տեսնում ունայնութիւնը երկրային մեծութիւնների: Եւ ջանում եմ ուսանել սաստիկ սէրը Սրբուհի Եղիսաբէթի, որն արժանացաւ քո այցելութեանը:

7. Այնտեղ ես նոյնպէս ծնրադրելով, ո՛վ հրեշտակների քաղցրիկ Թագուհի, ունկնդրում եմ քո սրտաբուխ օրհներգը: դու ուսուցանում ես ինձ երգել գովքն աստուածային, եւ անձիս երջանկութիւնը գտնել Յիսուսի մէջ, իմ Փրկչի: Ապագայ

¹ Ղկս 1, 35

² Հմմտ. Ղկս 2, 7

³ Մտթ 7, 14

դարերի համար սիոփիչ բալասան է սիրավառ խօսքերիդ խորհրդաւոր վարդը: Ամենակարողը մեծամեծ գործեր կատարեց քեզնում¹: Ուզում եմ խորհրդածել այս իրողութեան շուրջ, իր Հեղինակին օրհնելու համար:

8. Մինչ Սուրբ Յովսէփն անգիտանում էր կատարուած հրաշքը, դու ըստ քո մեծ խոնարհութեան կամեցար թաքցնել այն, թողնելով նրան իր կսկիծների մէջ, մօտ տապանակին, որ սքօղում է Փրկչի աստուածային գեղեցկութիւնը: Ա՛հ, քանիցս քաղցր է ինձ քո խօսուն լուսթիւնը: Այն իմ համար ախորժալուր նուագահանդէս է, որ հռչակում է մեծութիւնն ու զօրութիւնը այն հոգու, որն իր միակ օգնութիւնը Երկնքից է սպասում:

9. Ապա Բեթղէհէմում, ով Յովսէփ, Մարիամ, տեսնում եմ Ձեզ բոլորից մերժուած: Ոչ ոք չի կամենում հիւրընկալել աղքատ օտարականներին ... տեղ կայ միայն մեծամեծների համար: Եւ Երկնքի Թագուհին պարտաւոր է մտուրում ծնել Աստծուն: Ով Մայր Փրկչի, որքան գեղեցիկ ես դու եւ որքան վեհաշուք եմ տեսնում քեզ վայրի աղքատութեան մէջ:

10. Երբ տեսնում եմ Յաւիտենականին բարուրում նիրհած, կամ երբ լսում եմ Աստծոյ Խօսքի ճիշերը տկար ... Մարիամ, մի՞թէ կարծում ես՝ թէ նախանձում եմ Հրեշտակներին: Նրանց երկրպագելի Տէրը իմ սիրասուն Եղբայրն է: Որքա՛ն եմ քեզ երախտապարտ, Մարիամ, քեզ՝ որ այս ափերում ծաղկեցրիր աստուածային Ծաղիկը: Եւ որքան ես ինձ հմայում, մինչ ունկնդրում ես հովիւներին ու մոզերին եւ պահում այս բոլոր բաները քեզնում²:

11. Դու գերում ես սիրտս, երբ ընթանում ես ընդմէջ կանանց, որոնք իրենց քայլերն ուղղում են դէպի Տաճար. երբ մեր անձերի Փրկչին ներկայացնում ես այն բախտաւոր ծերունուն, որ սեղմում է Նրան իր կրծքին: Նախ ժպտով լսում եմ իր օրհներգը, բայց շուտով այդ խօսքերն արտասուել են ստիպում ինձ. Սիմէոնն իր մարգարէական հայեացքը մխրձելով ապագայից ներս, վշտակրութեան սուր է աւետում քեզ³:

12. Մարտիրոսների Թագուհի, սուր է միայն, որ անցնելու էր սրտիդ միջով, քանի դեռ ապրում էիր այստեղ՝ երկրի վրայ: Ահա արդէն իսկ հարկադրուած եմ տեսնում քեզ թողնելու բնակավայրդ, խուսափելու համար նախանձ թագաւորի կատաղութիւնից: Յիսուս խաղաղ նիրհում էր գրկիդ մէջ, երբ Յովսէփը տեղեկացրեց՝ թէ հարկ է մեկնել առանց յապաղման: Եւ ի յայտ է գալիս այստեղ քո հնազանդութիւնը, երբ ճանապարհ ես ընկնում առանց իմանալու ուղեւորութեանդ պատճառը:

13. Եզրիպտոսում նոյնպէս, յետին աղքատութեան մէջ, ինձ այնպէս է թւում, Մարիամ, թէ սիրտդ լի էր մնում զուարթութեամբ. Յիսուս քո հետ է, ի՞նչ աւելի գեղեցիկ հայրենիք, քան Նա: Ի՞նչ կարեւորութիւն ունի աքսորը: Դու տիրում ես երկիրքներն ամբողջ: Եւ այնուամենայնիւ, Երուսաղէմում դառն թախիծի օվկիանն է հեղեղում սիրտդ. Յիսուս երեք օրով թաքնուում է քո հայեացքից: Ա՛հ, այդ օրերին իրօք կրում ես աքսորի բոլոր հեծեծանքները:

14. Սիրոյ մեծ խանդավառմամբ Նրան վերագտար, եւ ասացիր այդ Մանկանը, որը շփոթութեան էր մատնում գիտուններին. «Որդի, այս ի՞նչ արեցիր դու մեզ. ահալասիկ հայրդ ու ես տագնապած քեզ էինք փնտռում»⁴: Իսկ Մանուկ Աստուածորդին, Իր Մօրը, որն իրեն պահում էր գրկում, պատասխանեց (ահա մի

¹ Հմմտ. Ղկս 1, 49

² Հմմտ. Ղկս 2, 19

³ Ղկս 2, 35

⁴ Ղկս 2, 48

խորին խորհուրդ)․ «Ինչո՞ւ էիք ինձ փնտռում: Չգիտեի՞ք, թէ Հօրս տանը ես պէտք է լինեմ»¹:

15. Աւետարանն ուսուցանում է ինձ, թէ Յիսուս աճելով իմաստութեամբ ու խոհեմութեամբ, միշտ ենթարկւում էր Մարիամին ու Յովսէփին: Եւ սիրտս յուշում է ինձ, թէ ինչպիսի սիրով էր Նա հնազանդւում սիրելի ծնողներին: Բայց այժմ հասկանում եմ Տաճարում կատարուածի իմաստը, իմ քաղցրիկ Թագաւորի պատասխանն ու իր ձայներանգը: Մարիամ, այս անուշիկ Մանուկն ուզեց, որ տիպար օրինակը լինես այն հոգու, որն Իրեն փնտռում է հաւատքի գիշերում:

16. Իսկ եթէ Աստուծոյ Որդին ուզեց, որ իր Մայրը նոյնպէս կրի սրտի խաւարն ու անձկութիւնը, բարիք է ուրեմն տառապելն այստեղ՝ երկրի վրայ: Այո՛, նեղութիւններին սիրով համբերելը երջանկութիւնների մէջ ամենաանխառն է: Յիսուս կարող է ետ վերցնել ինձնից այն ամէնը՝ ինչ տուել է․ ասա՛ Նրան, որ ինձնով չմտահոգուի: Եթէ իր կամքն է, կարող է շատ լաւ թաքնուել․ պատրաստ եմ սպասելու իրեն մինչեւ այն անմայրամուտ օրը, երբ հաւատքս այլեւս մայր կը մտի, հասնելով իր նպատակակէտին՝ Աստուծոյ տեսութեանը:

17. Կոյս շնորհներով լի, գիտեմ, որ Նազարէթում ապրեցիր աղքատ, առանց խնդրելու առաւել ոչինչ․ ո՛չ յափշտակութիւնները գեղեցկացրեցին քո կեանքը, ո՛չ հրաշքներն ու ուսուցումները, ո՛վ ընտրեալների դու Մայր Թագուհի: Աղքատներն ու մերժուածները բազմաթիւ են այս աշխարհում: Նրանք կարող են իրենց հայեացքներն անվախօրէն ուղղել դէպի քեզ: Դու, ով Մայր աննման, քայլում ես նրանց հետ ընդհանուր պարզ պողոտայով, նրանց դէպի Երկինք առաջնորդելու համար:

18. Ուզում եմ ապրել քո հետ, Մայր գորովագութ, այս վայրագ աքսորում, եւ ուզում եմ նմանուել քեզ ամէն օր: Ապշում եմ քեզ դիտելիս, քննելիս սրտիդ սիրոյ անյատակութիւնը: Բոլոր երկիւղներս վերանում են մայրական հայեացքիդ ներքոյ, որը սովորեցնում է ինձ ինչպէս լալ՝ այնպէս էլ ժպտալ: Դու չես արհամարհում սուրբ տօնախմբութիւնները, կիսում ես դրանք մեր հետ, օրհնում դրանք:

19. Տեղեկացար կանայքնակ նորապսակների մտատանջութեանը, որոնց հարսանեաց գինին վերջացել էր, եւ ըստ քո մեծ հոգատարութեան յայտնեցիր Փրկչին իրավիճակը, յուսալով իր աստուածային ուժին: Նախ թուաց, թէ Յիսուս մերժում է քո խնդրանքը: Պատասխանեց․ «Դա չի վերաբերում, ով կին, ո՛չ ինձ, ո՛չ քեզ»²: Իր սրտի խորքում, սակայն, Նա ասաց․ «Մայրիկ», եւ քո համար կատարեց իր առաջին հրաշքը³:

20. Մի օր, մինչ մեղաւորներն ունկնդրում էին վարդապետութիւնը Նրա, որ եկել էր իրենց Երկինք ուղղելու, տեսնում եմ քեզ, ով Մայր, նրանց շարքերում, սպասման մէջ: Ինչ որ մէկն ասում է Յիսուսին, թէ կամենում ես բաժանման երկարաձիգ օրերից յետոյ փարուել իրեն: Եւ այնժամ, խուռներամ բազմութեան առաջ, Որդին մեր հանդէպ իր սիրոյ անսահմանութիւնն արտայայտեց, ասելով․ «Ո՞վ է իմ եղբայրը կամ քոյրը կամ մայրը, եթէ ոչ նա՛՝ ով կատարում է իմ կամքը»⁴:

21. Կոյս անարատ, նրբագեղ Մայրիկ, դու՛ որ լսելով խօսքերն Յիսուսի չմթագնեցիր, այլ ցնծացիր հոգով, որովհետեւ Նա այդպիսով հասկացրեց մեզ, թէ մեր հոգիներն են իր ընտանիքն այստեղ՝ ներքեւում: Այո՛, դու ուրախանում ես, որովհետեւ Նա մեզ է տալիս իր կեանքը, իր աստուածութեան անհատնում գանձերը:

¹ Ղկս 2, 49

² Հմմտ. Յվհ 2, 4

³ Յվհ 2, 11

⁴ Հմմտ. Մտթ 12, 50; Մրկ 3, 35

ինչպէ՞ս չսիրել քեզ ու չօրհնել, Մարիամ, մեր հանդէպ տածած այս վիթխարի վեհանձնութեանդ համար:

22. Դու իրօք սիրում ես մեզ այնպէս՝ ինչպէս սիրում է մեզ Յիսուս, եւ յանուն մեր փրկագնման յանձն ես առնում հեռանալ Նրանից: Սիրել՝ նշանակում է տալ ամէն բան, նաեւ ինքն իրեն. դու կամեցար կիրառել սա, մնալով մեզ նեցուկ: Փրկչին յայտնի էին մայրական սրտիդ գաղտնիքները, գորովիդ անսահմանութիւնը: Յիսուս մեզ քեզ յանձնեց, ո՛վ Ապաստան մեղաւորների, երբ թողեց վշտակրութեան այս հովիտը, մեզ Երկնքում սպասելու համար:

23. Տեսնում եմ քեզ, Մարիամ, գագաթին գողգոթեան, խաչի մօտ կանգնած¹, իբրեւ քահանայ խորան բարձրացած, ընծայելով առ ի գոհացումն Հօր արդարութեան՝ հեզ հմմանուէլին, քո սիրտ Յիսուսին: Մայր ցաւագին, քո մասին է խօսում Մարգարէն. «Չկայ տառապանքներիդ հաւասար վիշտ»²: Ո՛վ մարտիրոսների չքնաղ Թագուհի, լքուած, միայնակ, դու մեր համար հեղում ես սրտիդ արիւնն ամբիժ, անարատ:

24. Սուրբ Յովսէփի տունը դառնում է յարկդ պատսպարան, իսկ Յիսուսի տեղը գրաւում է որդին Ձեբեղեան: Վերջին տողերն են քո մասին գրուած, որ կարդում եմ Աւետարանում: այն այդուհետեւ լուռութիւն է պահում քո մասին: Բայց նրա խոր համրութիւնը, Մայր իմ սիրասուն, մի՞թէ չի յայտնում թէ Յաւիտենական Խօսքն ինքն է կամենում հռչակել կեանքդ, այսպիսով է՛լ աւելի կատարեալ դարձնելով որդիներիդ՝ Երկնքի ընտրեալների բերկրանքը:

25. Շուտով, շատ շուտով կը մասնակցեմ ունկնդրմանը այդ հրաշք երգի, կը գամ Երկնքում քեզ տեսնելու: Դու, որ ժպտացիր ինձ կենացս ծագին, ե՛կ, ժպտա՛ ինձ կրկին ... Մայր իմ, մի՞թնում է արդէն: Այլեւս չեմ խուսափում վեհասլաց փառքիդ շողարձակումից. տառապեցի քո հետ ... եւ կամենում եմ այսուհետեւ ծնկներիդ բազմած երգել, ով Կոյս, թէ ինչու եմ սիրում քեզ ... նաեւ կրկնել յաւէտ, որ քո գաւակն եմ ես:

Մայիս 1897

¹ Յվհ 19, 25

² Ողբ 1, 12

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ե.

ՅԻՇԻՐ, ՅԻՍՈՒՍ

1. Յիշի՛ր, ո՛վ Տէր, փառքը հայրական եւ աստուածային երանութիւնդ յիշի՛ր, որոնք թողեցիր՝ կամովին արտաքսելով Ինքդ Քեզ երկիր, խեղճ մեղաւորներիս վերականգնման համար: Ա՛հ, Յիսուս, խոնարհուելով դէպի Կոյսն Մարիամ, քողարկեցիր մեծութիւնն ու փառքդ անսահման: Բայց այդ մայրական որովայնը, որ եղաւ Քո երկրորդ Երկինքը, յիշի՛ր:

2. Ծննդեանդ օրը, յիշի՛ր, Երկնից իջնելով հրեշտակներն երգեցին. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում եւ երկրի վրայ խաղաղութիւն, բարի կամքի տէր մարդկանց»¹: Ահա տասնինը դարեր շարունակ Դու կատարում ես խոստումդ. խաղաղութիւնն է որդիներիդ հարստութիւնը: Եւ ես նոյնպէս, այն ճաշակելու համար, գալիս եմ դէպի Քեզ:

3. Ահաւասիկ գալիս եմ դէպի Քեզ, թաքցրու ինձ խանձարուրիդ ետեւում, կամենում եմ ընդմիշտ օրօրօցիդ մօտ մնալ, ուր հրեշտակների հետ երգելով՝ կը կարողանամ յիշեցնել Քեզ այդ տօնական օրերը: Ա՛հ, Յիսուս, յիշի՛ր հովիւներին ու արքաներին այն մոգ, որոնք մեծ ցնծութեամբ Քեզ էին մատուցում իրենց ընծաներն ու ... իրենց սրտերը: Եւ անմեղ մանուկների բազմութիւնը յիշի՛ր, որ Քո համար հեղեց արիւնն իր:

4. Յիշի՛ր, որ արքայական գահիցդ աւելի նախընտրեցիր գիրկը Մարիամի: Ո՛վ Մանուկ փոքրիկ, կենսական ուժերիդ պահպանման համար Դու կուսական կաթով սնուեցիր: Հրաւիրիր ինձ Մարիամի պատրաստած սիրոյ խնջոյքին, եղբայր իմ Յիսուս, հրաւիրիր ինձ եւ յիշի՛ր քրոջդ փոքրիկ, որն եղաւ պատճառը սրտիդ բարբախման:

5. Յիշի՛ր Քեզ հայրագիր խոնարհ Յովսէփին, որն ըստ երկնային հրամանի՝ հեռացրեց Քեզ խենթ մահկանացուի մոլեգնումներից, առանց խանգարելու նինջդ անուշիկ: Յիշի՛ր, ով Խօսք Դու Աստծոյ, խորհուրդն ապշալի. մնացիր լուռ ու մունջ, միայն հրեշտակը խօսեց յանուն Քո: Ինչպէս նաեւ յիշի՛ր նեղոսեան ավերում աքսորդ հեռաւոր:

6. Յիշի՛ր, որ եզիպտական ծովափում մանկական աչքերդ հիանում էին այն նոյն աստղերով ու լուսնով գեղափայլ, որոնք ես դիտում եմ երկնքում անամպ: Մարիամին գրկող ձեռքերովդ ստեղծեցիր այս տիեզերքն ու տուիր նրան կեանք: Եւ այդ պահին մտածում էիր նաեւ իմ մասին: Յիսուս, Արքայազն իմ, յիշի՛ր դա:

7. Յիշի՛ր, որ միայնութեանդ մէջ երբեք անգործ չէիր մնում. սովորում էիր ապրել անծանօթ եւ մերժում էիր մարդկային գիտութիւնը: Սակաւաթիւ խօսքերդ ապշանքն են աշխարհի, բայց Քեզ հաճելի եղաւ թաքցնել իմաստութիւնդ խորին: Անուս հռչակուեցիր, եւ դա յիշի՛ր, Տէր ամենակալ:

8. Յիշի՛ր, որ օտար այս երկրում եղար թափառող, Դու՝ Խօսք Յաւիտենական: Չունէիր ոչինչ, եւ ոչ իսկ մի քարայր, մի անկողնի չափ յարդ, գէթ թռչնի մի բոյն²: Ա՛հ, Յիսուս, սրտիս մէջ եկ Դու, հանգստացիր ինձնում. ե՛կ, ահա հոգիս պատրաստ է Քեզ ընդունելու: Փրկի՛չ սիրելի, սիրտս ընդմիշտ Քոնն է:

¹ Հմմտ. Ղկս 2, 14

² Հմմտ. Մտթ 8, 20

9. Յիշիր այն գործովդ աստուածային, որ բաշխեցիր փոքրիկներին. ես նոյնպէս ուզում եմ գգուանքիդ իմ բաժինը, ողջագուրումդ երկնային: Գործադրելու եմ մանկութեան առաքինութիւնը, Երկնքում քաղցրիկ ներկայութիւնդ վայելելու համար: Յաճախ էիր կրկնում. «Փոքրիկներինն է իմ արքայութիւնը»¹: Յիշի՛ր դա:

10. Յիշիր այն պահը, որում ջրհորի մօտ նստած մի յոգնած ուղեւոր² Սամարացուն պատեց Իր կրծքում պարփակուած սիրոյ կոհակներով: Ա՛հ, գիտեմ՝ թէ ով է Նա, որ խնդրում է մի քիչ ջուր խմելու. Աստուծոյ Պարգէնն է, ակունքը փառքի: Դու ես ջուրն այդ աղբիւրաբուխ, Դու՝ որ ասում ես մեզ. «Դէպի ինձ եկէք»:

11. «Դէպի ինձ եկէք յոգնածներ բոլոր եւ ես կը հանգստացնեմ ձեզ»³. նետուէք Սրտիս մէջ եւ կենդանի ջրի աղբիւրներ կը բխեն ձեզնում»⁴: Ծարաւ եմ, Յիսուս, կարիքն ունեմ այդ ջրի, ողողիր ինձ նրանով. ես ընթանում եմ դէպի Քեզ՝ սիրոյդ օվկիանում հաստատելու համար բնակութիւնս:

12. Յիշիր՝ թէ որքան յաճախ, աւա՛ղ, ես՝ որդիս լոյսի⁵, մոռացայ իմ Թագաւորիդ: Յիսուս, ներողամիտ եղիր այս մեծ խեղճութեանս հանդէպ, ողորմիր ինձ յանուն Քո սիրոյ: Շնորհը տուր ինձ, Տէր, երկնային իրողութիւններին ունակ լինելու, լուսաւորիր ինձ Սուրբ Աւետարանի գաղանիքներով. այս ոսկի գիրքը իմ միակ գանձն է, յիշի՛ր:

13. Յիշիր, որ Մայրդ Աստուածածին սքանչելի կարողութիւն ունի սիրաշունչ սրտիդ վրայ. յիշարժան է այն օրը, երբ ջուրը անուշահամ գինու փոխեցիր, ընդունելով իր մայրական խնդրանքը: Այժմ էլ նոյն նրա ձայնին անսալով, գործերիս այս փոքրիկ չքաւոր՝ եռանդ ներշնչիր: Ստէպ յիշիր, Յիսուս, որ ես իր գաւակն եմ:

14. Յիշիր, թէ ինչպէս էիր յաճախ արեւամուտին բլուր բարձրանում, եւ այնտեղի աստուածային աղօթքներդ յիշիր, սիրոյ գովերգներդ առ Հայր, երբ նիրհում էր երկիրը: Ես, Յիսուս իմ, երբ ժամասացութեան եմ գալիս, Քո աղօթքն եմ նուիրում մաղթանքներում իմ: Այնտեղ, Սրտիդ մօտ, երգում եմ երջանիկ: Յիշի՛ր դա:

15. Յիշիր, որ արտերը դիտելիս՝ աստուածային Սիրտդ կանխատեսեց հունձը. դէպի Սուրբ Լեռն ուղղած աչքերով մրմնջում էիր ընտրեալների անունները: Ես նոյնպէս ամէն օր, Աստուած իմ, նուիրում եմ ինձ ու աղօթում, որ հունձդ շուտով հաւաքուած լինի: Յիշիր, որ մշակներիդ համար են ինչպէս ուրախութիւններս, այնպէս էլ վշտերս, միշտ:

16. Յիշիր անչափ բերկրանքը հրեշտակների, եւ ներդաշնակ նուագն Արքայութեանդ մէջ երկնային, եւ զուարթութիւնը վեհ բազմութիւնների, երբ մի մեղաւոր դէպի Քեզ է յառում հայեացքն իր աղերսող, լալազին: Ես կամենում եմ հարստացնել այս մեծ բերկրանքը ... եւ մեղաւորների համար, Յիսուս, աղօթելու եմ առանց դադարի. քանի որ Կարմեղոս եկայ՝ չնաշխարհ Երկինքդ բնակիչներով լցնելու համար, յիշի՛ր դա:

17. Յիշիր այն քաղցր հուրը, որով կամեցար հրդեհել հոգիները: Նմանօրինակ մի փոքրիկ բոց տեղադրեցիր իմ սրտից ներս նաեւ, եւ ես ուզում եմ, որ նրա ճաճանչն ինձնում տարածուի: Նուագագոյն կայծն անգամ, ով կեանքի Խորհուրդ, բաւական է վիթխարի հրկիզման համար: Կամենում եմ կրակդ տանել հեռո՛ւ հեռո՛ւ: Աստուած իմ, յիշի՛ր:

¹ Հմմտ. Մտթ 18, 3

² Յվհ 4, 6...

³ Մտթ 11, 28-30

⁴ Հմմտ. Յվհ 7, 38

⁵ Ղկս 16, 8

18. Յիշիր այն շքեղ տօնախմբութիւնը, որ պատրաստեցիր զղջացած անառակի համար: Դու, որ, յիշի՛ր, պահ առ պահ, Դու ես՝ որ առաքում ես սնունդ հոգուն մաքրափայլ: Յիսուս, Դու սիրով ես ընդունում անառակ որդուն ... բայց Սրտիդ օվկիանը սահմանագծուած չէ իմ առաջ. իմն են գանձերդ բոլոր, ով Սէր իմ, Թագաւոր իմ, յիշի՛ր:

19. Յիշիր, որ արհամարհելով փառքը, շռայլում էիր աստուածային հրաշքներդ ու աղաղակում. «Ինչպէ՞ս կարող էք հաւատալ դուք, որ փնտռում էք մարդկային փառքը¹: Գործերս թւում են ձեզ զարմանահրաշ, բայց առաւել եւս զարմանահրաշ են լինելու գործերն իմ բարեկամների»²: Յիսուս, Պաշտպան իմ սիրասուն, յիշիր՝ թէ որքան հեզ էիր ու սրտով խոնարհ:

20. Յիշիր այն վսեմ յափշտակութիւնը, որով համակուեց Սուրբ Առաքեալը. լցուեց բարութեամբ, ըմբռնեց գաղտնիքներդ: Տէր, չեմ նախանձում երջանկագոյն աշակերտիդ. գիտեմ նաեւ ես գաղտնիքներդ բոլոր, որովհետեւ հարսնացուդ եմ: Ո՛վ Աստուած իմ, Փրկիչ իմ, ես նոյնպէս Սրտիդ մէջ եմ գտնում հանգիստս, Սրտիդ՝ որ իմն է:

21. Յիշիր, որ հոգեվարքիդ երեկոյեան արիւնդ խառնեցիր արցունքներիդ հեղուած. ա՛հ, գոհարներ սիրոյ, որոնց արժէքն անհուն՝ ծնունդ պարգեւեց ծաղկանց կուսաբոյր: Ահա, օրհնեալ հոգուդ զուարթութեամբ խօսում էիր հրեշտակի հետ ու պատմում նրան, թէ ինչ առատ բերք է տալու ընտրութիւնդ այդ: Բայց այն, որ ինձ նոյնպէս տեսար շուշաններիդ մէջ ընտրեալ, Յիսուս իմ, յիշի՛ր:

22. Արիւնդ անապակ ու վշտակրութիւնդ աղբիւր հանդիսացան՝ ծաղիկներ սրբող, որ նաեւ կարող դարձրեց նրանց այստեղ ներքեւում ծնել հսկայաքանակ սրտեր՝ սիրովդ լեցուն: Ես կոյս եմ, Յիսուս: Եւ ճիշտ այստեղ է խորհուրդն անպատում, որ միանալով Քեզ, միաժամանակ մայրն եմ հոգիների բազում: Յիշիր այն կոյս ծաղիկներին, որ փրկում են խեղճ մեղաւորներին:

23. Յիշիր, որ ծաղրուծանակի ենթարկուելով, մի Դատապարտուած երկինք ուղղուելով աղաղակեց. «Շուտով կը տեսնէք ինձ փառքով պսակուած, զօրութեամբ հանդերձ»³: Ոչ ոք չէր կամենում հաւատալ, թէ Նա Որդին է Աստծոյ, քանի որ փառքն իր անհաս աննկուն՝ քողարկուած էր: Ո՛վ Իշխան խաղաղութեան, ես, ես ճանաչում եմ Քեզ ու հաւատում:

24. Յիշիր, որ միշտ անձանօթ եղաւ աստուածութիւնը Դէմքիդ, ընդմէջ նոյնիակ իւրայիններիդ: Յիշիր, որ ինձ թողեցիր պատկերդ քաղցրիկ ... եւ ես, գիտես դա, Քեզ ճանաչեցի: Այո՛, Քեզ ճանաչեցի նաեւ երբ պատուած էիր արցունքներով լեղի դառնաղի. ո՛վ Դէմք Յաւիտենականի, քայլ առ քայլ պեղում եմ պարգեւներդ անգին: Քողարկուած հայեացքդ մխիթարեց ինձ նեղութեան ժամին, յիշի՛ր:

25. Յիշիր տրտունջն այն սիրալի, որ դուրս ժայթքեց Քո Սրտից, խաչի վրայ: Այն դրոշմուած է սրտիս մէջ, Յիսուս: Ա՛հ, ինչպէս եմ կիսում պապակդ այրող: Եւ որքան աւելի է խոցում Քո հրով, այնքան աւելի է սիրտս ծարաւում. այն ծարաւի է, ուզում է Քեզ հոգիներ ընծայել: Եւ որ ես այրում եմ օր ու գիշեր սիրոյդ ծարաւով, յիշի՛ր:

26. Յիշիր, Յիսուս, ով Խօսք Դու կեանքի, որ ինձ այնքան սիրեցիր, որ յանուն իմ զոհաբերուեցիր: Ես նոյնպէս կամենում եմ սիրել Քեզ խենթի նման. ես նոյնպէս թող ապրեմ ու մեռնեմ Քո համար: Դու գիտես, Աստուած իմ, որ միակ բաղձանքս

¹ Յվհ 5, 44

² Հմմտ. Յվհ 14, 12

³ Հմմտ. Մտթ 26, 64; Մրկ 14, 62; Ղկս 22, 69

հոգիների լցուելն է Քո հանդէպ սիրով, ինչպէս նաեւ մարտիրոսանալս մի օր: Կամքս է՝ մեռնել ըստ սիրոյ: Տէր, յիշի՛ր իմ այս փափաքը:

27. Յիշիր, որ յաղթութեանդ օրն ասացիր. «Երանի նրանց, ովքեր հաւատում են Աստուծոյ Որդուն, առանց Նրան փառքի մէջ տեսնելու»¹: Սիրում եմ Քեզ ու պաշտում եմ Քեզ հաւատքի ստուերում, իսկ տեսնելու համար Քեզ՝ սպասում եմ խաղաղ արշալոյսին: Յիսուս իմ, յիշիր, որ բաղձանքս Քեզ այստեղ ներքեւում տեսնելը չէ:

28. Յիշիր, որ Հօր մօտ վերադառնալով, չէիր կարող թողնել մեզ որբ². որ Քո համար բանտ կառուցելով երկրի վրայ, կարողացար թաքցնել ճառագայթները Քո աստուածութեան: Այդ թաքստոցի ստուերը, սակայն, լուսաճեմ է ու մաքրափայլ, հաւատքի կենդանի հացն է, սնունդը երկնային: Ա՛հ, սիրոյ Խորհուրդ, Յիսուս, Դու հացն ես իմ հանապազորդ³:

29. Ո՛վ Յիսուս, հաշուի չառնելով սիրոյ խորհրդի թշնամիների չարախօսութիւնները, կամենում ես յայտնել՝ թէ որքան ես ինձ սիրում. ընտրում ես իմ սիրտն ու այնտեղ բնակւում: Ո՛վ Հաց մեր՝ աքսորեալների, Աստուած իմ, Սուրբ Նշխար, այլեւս ես չէ՝ որ ապրում եմ, այլ Քո իսկ կեանքն է շարունակւում ինձնում: Եւ ոսկեգօծ սկիհը, որ գերադասում ես, Յիսուս, ես եմ:

30. Յիսուս, ես եմ կենդանի սրբավայրդ, որ չարագործները չեն կարող եղծել. մնա՛ սրտիս մէջ, մի՞թէ նա չէ այն փոքրիկ պարտէզը, որի իւրաքանչիւր ծաղիկը կամենում է ուղղուել դէպի Քեզ: Եթէ Դու հեռանաս այնտեղից, իմ ձիւնափայլ Շուշան, լաւ գիտեմ, որ բոլոր ծաղիկներս շուտով կը խամրեն: Այսուհետեւ, ուրեմն, սիրելիդ իմ Յիսուս, Շուշան հոտաւէտ, ծաղկիր ու փթթիր ինձնում:

31. Յիշիր, որ երկրաբնակ կեանքիս նպատակը մեղաւորների անտարբերութեան փոխարէն Քեզ մխիթարելն է: Իմ միակ սէր, ընդունիր այս աղօթքս, եւ սիրելու համար Քեզ՝ տուր ինձ սրտեր բիւր հազարաւոր: Բայց բաւական չէ, հմայող Գեղեցկութիւն, Յիսուս իմ: Տուր ինձ, Քեզ սիրելու համար, աստուածային Քո իսկ սիրտը: Եւ, Տէր, ամէն պահ յիշիր եռաբորբոք ակնկալութիւնն իմ այս:

32. Յիշիր, որ սուրբ կամքդ հանգիստն է իմ, երջանկութիւնն իմ միակ: Յանձնում եմ ինձ ու նիրհում անվախ, ընդմէջ ձեռքերիդ, Փրկիչ իմ Աստուած: Եթէ Դու նոյնիսկ ննջես, մինչ դրսում կը մոնչայ փոթորիկն անեղ, ես կամենում եմ այս անդորրում մնալ ընդմիշտ առյաւէտ: Բայց երբ ննջում ես, Յիսուս, պատրաստիր ինձ վերջին գարթնումին:

33. Եւ յիշիր, որ յաճախ եմ հառաչում, երբ յիշում եմ այդ մեծ օրուայ յետոն, այն օրուայ՝ երբ հրեշտակը կ'ազդարարի մեծաձայն գոչելով. «Ժամանակը վերջացաւ, եկէ՛ք Դատարան»: Այնժամ տարածքն անհամբեր անցնելով, կը դամ թաքնուելու աստուածային Դէմքիդ ետեւում: Դո՛ւ իմ Երկինքը կը լինես, պէ՛տք է որ այն լինես յաւիտենական մեր բնակավայրում: Յիշի՛ր դա, Յիսուս:

21 Հոկտ. 1895

¹ Յվհ 20, 29

² Յվհ 14, 18

³ Մտթ 6, 11; Ղկս 11, 3

ՅԱԻԵԼՈՒԱԾ Զ.

ՏԱՂ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Լզքեզ Աստուած գովաբանեմք,
Եւ ըզքեզ Տէր խոստովանեմք.
Լզքեզ Հայր մեր անժամանակ
Պաշտէ երկիր առ հասարակ:

Քեզ հրեշտակաց զօրք ամենայն,
Երկիրնք եւ պետք միանգամայն,
Հոյլք քրովբէից եւ սրովբէից
Անլըռելի լեալ ճայնակից:

Եղանակեն զերգս օրհնութեանց,
Սուրբ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց.
Լի են երկիրնք 'ւ երկիր համայն
Փառօք քո մեծ վայելչութեան:

Զքեզ պանծալի դասըք սրբոց,
Երկոտասան առաքելոց,
Պարըք գովեալ մարգարէից,
Տնօրէնութեանդ նախատեսից,

Գունդք յուսազգեաց մարտիրոսաց,
Գովաբանեն զՏէրըդ փառաց.
Լզքեզ մինչեւ ի ծագս երկրի,
Դաւանէ Սուրբ Եկեղեցի:

ԼզՀայրըդ մեծ անբաւելի,
Լզմիածինըդ քո զՈրդի,
Զմխիթարիչ քո Սուրբ Հոգի
Փառաւորէ անլըռելի:

Քրիստոս փառաց Դու թագաւոր,
Անժամանակ ծընունդըդ Հօր,
Ի փրկութիւն մարդկան ազգի,
Խոնարհեցար յարգանդ կուսի:

Դու կոխեցեր զմահու խայթոց.
Զերկիրնս բացեր յուսացելոց.
Եւ համբարձեալ յաջմէ նըստար,
Փառօք ընդ Հօր քո հաւասար:

Գալ միւսանգամ ես հանդերձեալ,
Ի դատել զազգս հողածնեալ.
Եւ արդ խնդրեմք օգնել մեզ Տէր,
Զոր պատուական արեամբ գնեցեր:

Ընդ սուրբըս քո դասաւորեա՛,
Ի փառս անանց եւ յարակայ.
Ըզժողովորդըս քո փրկեա՛,
Զժառանգութիւնս քո Տէր օրհնեա՛:

Հովուեա՛ զնոսա եւ խնամարկեա՛,
Յայսրմհետէ եւ առ յապա.
Զօր հանապազ զքեզ օրհնեսցուք,
Եւ զանուն սուրբ քո գովեսցուք:

Շնորհեա մեզ Տէր զաւուրս կենաց
Անցուցանել առանց մեղաց.
Ողորմեաց մեզ Տէր ողորմեաց,
Եւ գըթութեամբ ի մեզ հայեաց:

Ողորմութիւնդ լիցի ի մեզ,
Որպէս եւ մեք յուսամք ի քեզ,
Ի քեզ անձինք մեր յուսացան,
Մի՛ ամաչեսցեն ի յաւիտեան:
Ամէն¹:

¹ Գիրք Արարողութեանց Վանական Հանդիսից, Սբ. Ղազար, Վենետիկ 1932, էջ 37:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Է.

ԻՄ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԲԵՐԿՐԱՆՔԸ

1. Կան այս աշխարհում անձինք, որոնք ի զուր եւն փնտռում երջանկութիւնը: Իմ պարագային ճիշտ հակառակն է: Բերկրանքն ունեմ իմ սրտում: Այն ծաղիկ է անթառամ, որ յաւիտեան ինձ է պատկանում, եւ ամէն օր ժպտում է ինձ, դալար՝ ինչպէս վարդն առաւօտեան:

2. Ես իրօք ուրախ եմ չափազանցութեան աստիճան, եւ կատարում եմ միշտ այն՝ ինչ կամենում եմ: Բայց ինչպէ՞ս կարող էի այդպիսին չլինել, եւ ի յայտ չբերել իմ գուարթութիւնը: Ունեմ իբրեւ բերկրանք սէրս՝ տառապանքի հանդէպ տածած. ժպտում եմ արտասուելիս: Եւ շնորհակալ եմ այն փշոտ տատասկներին, որ թաքնւում են ճանապարհիս, ծաղիկների տակ:

3. Երբ անամպ երկինքը մթազնում է, եւ թւում է՝ թէ հեռանում է ինձնից մէկընդմիշտ, իմ բերկրանքն է ստուերում մնալը, խոնարհուելն ու թաքցնելն ինքս ինձ: Խաղաղութիւնս՝ Յիսուսի ամենասուրբ կամքն է. Յիսուսի՝ իմ միակ Սիրոյ: Այսպիսով ապրում եմ աներկիւղ, եւ սիրում եմ ցերեկը նոյնքան՝ որքան գիշերը:

4. Իմ խաղաղութիւնը. մնալ փոքրիկ: Այսպիսի դէպքում եթէ ընկնում եմ, իսկոյն ոտքի եմ կանգնում, եւ Յիսուս դէպի ինձ է մեկնում իր աջը: Այնժամ ասում եմ իրեն, որ ինքն ամէն ինչ է իմ համար. այնժամ ծածկում եմ իրեն քաղցրախօսութիւններով: Եւ այս վերջինները կրկնապատկում եմ, երբ Նա թաքնւում է հաւատքիս առաջ:

5. Իմ խաղաղութիւնը, մինչ արտասուում եմ, հոգեվիճակս մարդկանց հայեացքից թաքցնելն է. քանիցս հոգեպարար է վիշտը քողարկել կարողանալու քաղցրութիւնը: Այո՛, կամենում եմ տառապել ու չցուցադրել այն, որպէսզի Յիսուս մխիթարուի: Այս աքսորական սրտիս բերկրանքը Նրան ժպտադէմ տեսնելն է:

6. Իմ խաղաղութիւնը տեւական պայքարն է յանուն նորանոր ընտրեալների: Եւ ուզում եմ մեղմօրէն ասել, լաւագոյնս՝ ուժերիս ներածի չափով, Յիսուս իմ քաղցրիկ. «Երջանիկ եմ, Աստուած–Եղբայր իմ, ի սէր Քո տառապելուս համար. եւ իմ բերկրանքն այստեղ ներքեւում Քեզ ժպիտ պարգեւելն է»:

7. Ուզում եմ շատ ու շատ ապրել, Տէր, եթէ Քո կամքը սա է. կամ էլ շուտով ճախրել դէպի Երկինք, եթէ հաճելի է Քեզ: Սէրը, այս կրակը երկնային, սպառում է ինձ միշտ: Ի՞նչ կարեւորութիւն ունեն կեանքն ու մահը. իմ միակ բերկրանքը սէրդ է:

21 Յունուար 1897

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ը.

ՍՓՈՒԵԼ ԾԱՂԻԿՆԵՐ

1. Յիսուս, սէր իմ միակ, որքան հաճելի է ինձ ամէն երեկոյ ծաղիկներ սփռել խաչիդ ստորոտում: Թերթատելով Քո համար վարդը գարնանային՝ կ'ուզէի չորացնել արցունքները Դէմքիդ:

2. Սփռել ծաղիկներ ... նշանակում է նուիրել Քեզ ընծան իմ ամենաթեթեւ հառաչանքների, վշտերի ծանրածանր, իմ խեղճութիւնների, իմ երջանկութեան ու գոհողութեան՝ փոքրիկ իմ նման: Ահա իմ ծաղիկները:

3. Տէր, հոգիս տարուած է Քո գեղեցկութեամբ, կամենում եմ Քեզ վերադարձնել ծաղիկներն իմ ու անուշահոտութիւնները. եւ առ Քեզ առաքելով դրանք քամու թեւերով՝ կ'ուզէի հրկիզել սրտերը բոլոր:

4. Սփռել ծաղիկներ: Յիսուս, սա է իմ գէնքն ու հնարամտութիւնը, երբ ուզում եմ պայքարել մեղաւորների փրկութեան համար: Իմն է յաղթանակը. զինաթափում եմ Քեզ միշտ ... իմ ծաղիկներով:

5. Ծաղկանց թերթիկները Դէմքիդ հպուելով, ասում են Քեզ, որ սիրտս Քոնն է, առանց փախուստի որեւէ հնար ունենալու: Ա՛հ, Դու գիտես խօսքերը թերթատուած վարդի, եւ Քեզ ժպիտ է պարգեւում սէրն իմ:

6. Սփռել ծաղիկներ ... : Վերերգումը փառքիդ հաճոյքն է իմ միակ՝ ավերում այս ողբի: Բայց այլեւս շուտով կը մեկնեմ ես Երկինք, ուղեկցութեամբ հրեշտակիկների, անդադար յաւէտ սփռելու ծաղիկներ:

28 Յունիս 1896

